

11.057

ԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Կ. Ի. ՊՈՂՄՈՒՏԱԿԻ

ՊԻՈՆԵՐԻՆ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Թարգմանեցին

Դ.Ա. ՀԱՅՐԱՅԻՆ ՅԵՎ. Հ.Բ. ՊԵՏՐՈՎՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1928

ՀԿԴՈ  
Դ-74

24 SEP 2005  
1 DEC 2009

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՍԵՐԻԱ

Կ. Ի. ՊՈՂՄՈՏՍԿԻ

ՊԻՈՆԵՐԻՆ  
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Թարգմանեցին  
Գ. Ա. ՀԱՅՐԵՆԻ ՇԵՎ. Հ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ - ՅԵՐԵՎԱՆ. 1928

22 JUL 2013

11057

## ԽՍՀՄ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՑԵՐԿՐՆԵՐՈՎ Ե ՈՂԱԿՎԱԾ

Հր. № 782. Գըտուեպգար 780 (բ) Տիրաժ 3000  
Պհաճքատի առաջին տպարան Վաղարշապատում  
Թատվեր № 197



8648-57

Նալի՛ր քարտեզին ու գու կտեսնես, վոր  
Խորհրդային Հանրապետությունների Միությու-  
նը բուրժուական յերկրներին սահմանակից ե:  
Այդ յերկրներից ամեն մեկում—Լեհաստանում,  
Ռումինիայում, նամանավանդ Ֆրանսիայում և  
Անգլիայում բանակը վոչ թե նվազում, այլ մե-  
ծանում է: Լեհաստանը, Ռումինիան, Ֆրանսիան  
ու Անգլիան իրենց զորքերի մեջ սպառազին-  
ման նոր միջոցներ են մտցնում, պատերազմի  
նոր ու ավելի մահաբեր միջոցներ: Այդ յերկրե-  
րի բուրժուազիան պատերազմի պատրաստու-  
թյուններ ե տեսնում: ԽՍՀՄ-ն պատերազմ չի  
ցանկանում. բոլոր յերկրների կառավարություն-  
ներին վոչ թե խոսքով, այլ գուծով զինաթա-  
փություն ե առաջարկում: Այս բանին ապացուց  
այն, վոր մեր Կարմիր բանակը կրծատվել—  
560,000 մարդու յե հասեր իսկապաշ, մեզնում բա-  
նակի թիվը  $5\frac{1}{2}$  միլիոնի յեր հասնում, այսինքն,

պատերազմից հետո Խորհրդային կառավարությունը կարմիր բանակի թիվը 10 անգամ կրեացել է:

Բուրժուական վոր յերկրի բանակն ել վերցնելու լինենք, ԽՍՀՄ-ի Կարմիր բանակը թվով նրանից պակաս է: ԽՍՀՄ-ի ամեն մի 10.000 բնակչին 41 կարմիր բանակացին ե ընկնում, Լեհաստանի ու Ռումինիացի ամեն մի 10.000 բնակչին 100 զինվոր ե ընկնում, այսինքն՝ 2 անգամից մի քիչ ավելի, իսկ Ֆրանսիայում՝ 5 անգամ ավելի: Բանակի պետական ծախսը մեզնում ամեն մի բնակչին 3 ռուբլի յե ընկնում, Լեհաստանում՝ 11 ռուբլի, իսկ Ֆրանսիայում՝ 13 ռուբլի 70 կոպեկ, այսինքն՝ Լեհաստանն իր բանակի վրա ԽՍՀ Միությունից 4 անգամ ավելի յե ծախսում, իսկ Ֆրանսիան՝ ել ավելի:

Խորհրդային կառավարությունը բոլոր յերկրների բուրժուազիալին հաճախ զինաթափություն ե առաջարկել. այս առաջարկության պատասխանն այն ե յեղել, վոր այդ յերկրների բուրժուազիան նորից ե սպառազինվել: Անգլիայի, Ֆրանսիայի ու Ամերիկացի ծովային և ոդային նավատորմը տարեցտարի մեծանում ե, բայց այդ նավատորմը պատերազմի համար ե մեծանում: Ուրեմն բուրժուազիան պատերազմի պատրաստություններ ե տեսնում: Խոսքով խաղա-

ղության մասին ե խոսում, այդ առթիվ համագումարներ ե հրավիրում, իսկ հետեւ սուր ե սրում:

Սակայն, համագումարները միայն խաղաղության հարցերը քննելու, զինաթափության ու այդ որինակ լավ առաջարկությունների համար չե, վոր գումարվում են: Այդ համագումարների հետ միաժամանակ բուրժուազիան նաև ուրիշ գործերի համար ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի պատրաստություններ տեսնելու համար եր հավաքվում: ԽՍՀՄ-ի արևմտյան զրացի յերկրների գեներալները Ռիգայում խորհրդակցում ելին, թե ինչպես անեն, վոր պատերազմը հաջող յելք ունենա: Լեհաստանն ու Ռումինիան ուղղմական դաշինք են կնքել: Ռումինիան մինչև որս Բեսարաբիան բռնի կերպով պահում ե իր ձեռքում, այնտեղ անողոք հաշիվ ե տեսնում այն բանվորների ու զուղացիների հետ, վորոնք կամենում են ԽՍՀՄ-ին միանալ, Խորհրդային իշխանություն ունենալ:

Վերջին ժամանակներս բուրժուազիան, մասնավանդ անգլիական բուրժուազիան, փորձում եր բոլոր յերկրները ԽՍՀՄ-ի դեմ կազմակերպել, մեզ մեղադրում եր Բուլղարիացի Սոփիա քաղաքի տաճարը պայմեցնելու, Յեվրոպայում հեղափոխական տպատամբություններ կազմակեր-

պելու գործում: Ճիշտ է, առաջմ ըուրժուազի-  
ային չի հաջողվել ԽՍՀՄ-ի վրա զինված հար-  
ձակումներ կազմակերպել: Անդիմական բանվոր-  
ներն զգուշացրել են, վոր յեթե ԽՍՀՄ-ի դեմ  
պատերազմ սկսեք, ապա մենք «ԽՍՀՄ-ի աջակ-  
ցության կոմիտեներ» կստեղծենք և կդադա-  
րենք դենք շինելուց ու փոխադրելուց: Սակայն  
ըուրժուազիան ժամանակավորապես տեղի տվեց  
ու մեզ բոլորովին հանդիսատ չթողեց: Մենք պետք  
ե միշտ ավելի վատ որի համար պատրաստ լի-  
նենք: Ուստի Խորհրդավին Սոցիալիստական Հան-  
րապետությունների Միության Յ-ըդ համագու-  
մարը վորոշել ե Կարմիր բանակն ամրապնդել:  
Հզոր ու ուազմունակ Կարմիր բանակն ե լինելու  
խաղաղության լավագույն գրավականը:

Ժամանակակից պատերազմը վոչ միայն ճա-  
կատում բանակներն են մղում, առևել վողջ յեր-  
կիրն ե մղում: Ամեն ինչ պետք ե նպաստի  
հարձակում գործող թշնամուց պաշտպանվելուն  
ու նրան հաղթանակելուն: Ուստի բոլոր աշխա-  
տավոր բնակչությունը ուազմական տեսակետից  
դաստիարակություն պետք ե ունենա ու զալիք  
պատերազմի ձևերը գիտենա: Մեզ մոտ, ՀՍԽՀ-  
ում, ամեն մի մարդ Կարմիր բանակը պետք ե  
ճանաչի, գիտենա, թե ինչպես ե Կարմիր բա-  
նակն ապրում, սովորում, հնարավոր թշնամի:

Ների դեմ պատերազմի պատրաստություններ  
առևնում: Պիսները պետք ե վոր Կարմիր բանա-  
կը ճանաչի - պատերազմի ժամանակնական Կարմիր  
բանակի ոգնականներից մեկը կարող ե դառնալ:

### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՐԺՈՒԱ- ԿԱՆ ԲԱՆԱԿԻՑ

Կարմիր բանակը բանվորա-գյուղացիական  
ե կոչվում: Այս բանակի՝ կարմիր բանակայինը,  
հրամանատարն ու քաղաքական աշխատավորը  
բանվորներ ու գլուղացիներ են: Բանվորներն ու  
գյուղացիներն իրենք են զենքը ձեռքներին  
պաշտպանում խաղաղ աշխատանքը, իրենց բան-  
վորա-գյուղացիական իշխանությունը: Այս կա-  
ռավարության առջև ամեն տարի նոր մարտիկ-  
ներ — կարմիր բանակայիններ են յերդվում.

«Յես, աշխատավոր ժողովքի զավակու,  
Սոցիալիստական Խորհրդավին Հանրապետու-  
թյունների Միության քաղաքացիս, ինձ վրա յեմ  
վերցնում բանվորական ու գյուղացիական բա-  
նակի ուազմիկի կոչումը»:

Կարմիր բանակում հրամանատարը կարմիր  
բանակայինի հետ «դուք» ով ե խսում: Կար-  
միր բանակը վոչ միայն ուազմիկ, մարտիկ, այս  
քաղաքացի յե դաստիարակում:

Անաշխատ տարբն ու բուրժուազիան զինակոչում են, բայց նրանց ձեռքը զենք չի տրվում. Նրանք Կարմիր բանակին միայն ծառայություններ են մատուցում: Միայն բանվորներն ու գյուղացիները, աշխատավոր ժողովրդի զավակներն իրավունք ունին զենքը ձեռքներին պաշտպանելու ԽՍՀՄ-ն<sup>1)</sup>:

Կարմիր բանակայինը վոչ միայն ԽՍՀՄ-ի աշխատավորների, այև համայն աշխարհի աշխատավորների առջև հանդիսավոր խոստում ե տալիս: Բանվորական ու գյուղացիական կառավարության հենց առաջին կոչին կարմիր բանակայինը պարտավորվում ե ամեն տեսակի փառնությունների, ԽՍՀՄ-ի բոլոր թշնամիների դեմ դուրս գալ՝ «սոցիալիզմի ու ժողովուրդների յեղացրության գործի համար չխնայել վոչ իր ուժերը, վոչ ել իր կյանքը»: Հետեապես Կարմիր բանակը համայն աշխարհի բոլոր աշխատավորների բարեկամն ե հանդիսանում, բոլոր ժողովուրդների յեղացրության համար ե Կարմիր բանակը կովում: Կարմիր բանակի թշնամիները ԽՍՀՄ-ի թշնամիներն են—ամբողջ աշխարհի բուրժուազիան: Կարմիր բանակի բարեկամները ԽՍՀՄ-ի բարեկամ-

1) Պարտազիր զինվորական ծառայության վերաբերյալ ուրենքի համաձայն, անաշխատները զինվորական հատուկ տուրք են գնարում:

ներն են — ամբողջ աշխարհի բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունը: Յեվ իզուր չե, վոր Խողինսկի դաշտում, Կարմիր բանակի ճամբարներում (լագերներում), գերմանական ու շվեդական բանվորները, -նորերս յեկած պատգամավորությունների անդամները, Կարմիր բանակի հետ յեղացրացան: Գերմանական բանվորները կարմիր բանակայինների, Պետքաղվարչության գորամասերի՝ բուրժուազիայի համար ամենազարհուրելի զորքերի գլխարկներ ելին դնում իրենց գլուխը:

Կարմիր բանակը ծնունդ ե առել ու զարգացել Փարբիկներում՝ զինվորներից, այսինքն՝ ցարական բանակի գյուղացիներից: Կարմիր բանակը վողջ Միության հանրապետությունների բանվորների ու գյուղացիների «հասարակական» մեծ «ժողովն» ե հանդիսանում:

Իսկ բուրժուական բանակում բանն ուրիշ է: Ոտար յերկրների զինվորը վոչ մի իրավունք չունի. Նրա իրավունքը միայն այն ե, վոր «առանց առարկելու լսի սպալին ու գեներալին»: Բուրժուազիան իր բանակի զինվորի մեջ միայն թնդանոթի միս ե տեսնում ու մեկ ել՝ վոսկով լի իր քսակը պաշտպանողի: Այս պատճառով ել բուրժուական բանակում սպան ու զինվորը յերակու տարբեր բաներ են: Մպային շատ բան ե

թուլատրվում, իսկ զինվորին—վոչինչ։ Զինվորը քաղաքական կուսակցության մեջ չել կարող մտնել. յեթե իմանան, վոր նա կոմիերիտական ե, այդպիսի զինվորին դատի յեն տալիս, ծեծում, հետը բարբարոսի պես են վարվում։ Զինվորն ընտրելու իրավունք չունի։ Զինվորի հետ «գու»-յով են խոսում։ Սպան կարող ե ծեծել զինվորին, վորովհետև այս բանի համար նրան վոչինչ չեն անում։ Բուրժուական բանակներում, ինչպես նախկինցարական բանակումն եր, զինվորն անլեզու «հայվան» (անասուն) ե։

Բուրժուական բանակների զինվորների մեջ ազգային փոքրամասնություններին պատկանող շատ զինվորներ կան. որինակ լեհական բանակում՝ բելորուսներ, հրյաներ, ուկրայնացիներ, ոսումինական բանակում՝ մոլդավներ։ Նրանք իրենց պետության համար չեն ուղում կովել վորովհետև հալրենիքն իրենց համար խորթ մաք ե։

Ուստի բուրժուական բանակներում կապիտալիստները վախենում են բանվորների ու գուղացիների ձեռքը զենք տալ։ Նրանք աշխատում են զինվորների գլուխը մտցնել, թե պետք ե «լսող», «հնագանգ», «կրոնի, թագավորի ու հայրենիքի» պարտք կատարող լինել և հազար ու մի ծրաբ-պրտի, հիմար ու ալճի-ալճի բաներ։ Առաջ ցարտկան բանակում ել ալդպիս եր։ Քա-

դաքականության մասին—վոչ մի խոսք. միան տերտերներն, ոգտվելով զինվորների տպիտությունից, նրանց հազար ու մի չլսված բաներ են պատմում։

Բայց փոխարենը՝ պատերազմի ու հեղափոխության ժամանակ նման բանակը կազմակուծվում ե ու քայլացվում։ Կարմիր բանակը քաղաքացիական կովի բովից ամրապնդված և ուժեղ ե գուրս յեկել։ Կարմիր բանակում այն բանվորների ու զյուղացիների ուժն եր թագավորում, վորոնք չելին ուղում հողը կալվածատերերին յետ տալ, իսկ Փաբրիկները՝ կապիտալիստներին։ Իսկ ցարտկան հին բանակը 1917 թ. բանվորների կողմն անցավ, վորոնք թագավորին գահընկեց արին (թախթից զցին), իսկ 1917 թ. Հոկտեմբերին ել բուրժուազիակին տապալեցին։ Յարական բանակի զինվորներն իրենց բայլշկիներ ելին անվանում, վորովհետև հասկացել ելին, վոր պատերազմն ավելորդ մի բան ե ու գիտակցել ելին, վոր հեղափոխությունն ե անհրաժեշտ։

Բոլոր յերկրների բուրժուազիան ուղում ե մեզ հետ կովել բայց չի կարողանում։ Նրա բանակները հենց վոր հասնեն կարմիր բանակին, իսկույն կքայլացվին, վորովհետև ներկայումս միմիայն ճիպոտի գիսցիպիլինարով են պահպում,

մանեւ զուր և չու չու միտան մայթառումասար վորովինետեւ յեվրոպական քաղաքների բանվորներն աշխարհում Աշխատանքի առաջին հանրապետության քաղաքները տեսել են: Յեթե այդ բանվորները զորակոչի ժամանակ կանչվեն ԽՍՀՄ-ի հետ պատերազմ անելու, նրանք զենքն իրենց տերերի՝ բուրժուազիալի դեմ կդարձնեն: Բանվորա-գլուղացիական կարմիր բանակը քաղաքի բանվորների ու գլուղացիների զինված միությունն ե:

Բուրժուական բանակ ասածո, սպայի, բուրժուազիալի ներկայացուցչի հրամանի տակ գրանվող տղետ զինվորն ե: Կարմիր բանակի ու բուրժուական բանակների տարբերությունն ել հենց այդ ե:

Պիոները կարմիր բանակի ու բուրժուական բանակների տարբերությունը պետք է իմանա:

Այդ տարբերությունը ճիշտն իմանալու համար պետք է իմանալ, թե ինչպես ե կարմիր բանակը կառուցված, ինչպես ե ապրում ու սովորում, այլև այդ բանակի ծագման պատմությունը: Կարմիր բանակը ոռւսական և ռուս յերկրների բուրժուազիալի կոփառերի մեջ ե աճել ու ամրապնդվել: Մի ժամանակ խորհուրդների ամբողջ աշխարհը հրեղեն ողակի մեջ եր. սպիտակ բանակներն ամեն կողմից մեզ նեղուա

ելին: Ելի հենց կարմիր բանակն այդ կոփառերից պատվով կուրս յեկավ: Կարմիր բանակը բանվորների ու գլուղացիների սիրասուն զավակն ե: Կարմիր բանակի նախորդները կարմիր գվարդիայի ջոկատներն ելին:

### ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ (1905 թ.)

Յարական կառավարությունը բանվորներին ու գլուղացիներին սաստիկ և անխիղճ ձնշում, այն ժամանակավա Ռուսաստանի տարբեր ազգություններին նեղուամ եր: Բանվորները 10—12 ժամ ելին աշխատում, արձակուրդ ստանալու իրավունք չունելին, ցածր աշխատավարձ ելին ստանում, գլուղացիները հող ու լծկան չունելին, վորովինետեւ հօղը կալվածատերերի ձեռքին եր, հարկ շատ ելին տալիս: Կառավարությունն առանձին ազգությունների միջև կոտորած ու հրյաների ջարդեր եր սարքում: Աշխատավոր ժողովուրդն իրավունքից զրկված եր: Բանվորների կողմից առաջարրված ամեն տեսակի պահանջ քննության եր առնվում իբրև մի հանցագործություն: Այս բոլորն ավելացում եր դժգոհություն հայտնողների թիվը, նրանց սերտ կապում եր հեղափոխության հետ ու մոտեցնում վերջինիս: Կռիվ գնացողն ու կուսակցություն կազմակերպողն ամենից առաջ բանվորներն են:

Սրանց միանում են գլուղացիները։ Բանվորների ու գլուղացիների միություն ե կռվում ու կոփում՝ յարական ինքնակալության, Փաբրիկատերերի ու կալվածատերերի և բոլոր ճնշողների դեմ։

Բանվորների ու գլուղացիների ուժերը համախմբվեցին բայլշերիների միջոցով, Վլադիմիր Իլյչ Լեսինի ղեկավարած Կոմունիստական կուսակցության միջոցով։ Այս կուսակցությունն իր շարքերի մեջ ե համախմբել ազատության դորձի համար կռվող՝ բանվոր դասակարգի բոլոր լավագույն ուժերը, նզոր ու անվեհեր մարտիկներին։

Յարական կառավարությունն աշխատում եր խեղդել հեղափոխական լեռութների ամեն տեսակի բռնկումներ, ամեն մի մարտիկի հետ խիստ ու դաժան կերպով հաշիվ եր տեսնում, գնդակահարելով բազմաթիվ անզեն մարդիկ։ Բանտ, աքսոր, տաժանակիր աշխատանքներ, կախաղան, զինված բանակ ու վոստիկանություն, ահա յարական կառավարության այն գենքերը, վոր հողի, ազատության ու բանվորի և գլուղացու լավագույն բախտի համար դուրս յեկողների դեմ եին դարձված։ Այդ զինված ուժին պետք եր նույնպես զինված ուժ հակազրել։ Բայլշերիներն այդ բանը նախատեսնում

ելին։ Նրանք անգում ելին ցարական կառավարության դեմ զինված ապստամբություն կազմակերպել։ Այդ նպատակով բայլշերիները պընդում ելին՝ բուրժուազիայի իշխանությունը տապալելու համար քաղաքներում բանվորների զինված ջոկատներ – կարմիր գվարդիա կազմակերպել։ Ենք այդ ջոկատներն ստեղծվեցին։

1905 թվի հունվարի 9-ին բանվոր գաստկարգը կին ու լեռեխալով, խաչ ու խաչվառով ու տերտերներով խաղաղ պահանջներով թագավորի մոտ գնաց։ Թագավորը ժողովրդից վախեցավ, իսկ զորքն ու վոստիկանությունն սկսեց անզեն բանվորներին – ցուցարարներին գնդակահարել։ Բանվորները խաչ ու խաչվառը, թագավորի պատկերները վոտքերի տակ գցին ու տրորեցին։ Տածանվեցին կարմիր դրոշակները։ Այն որից նրանք մի ավելորդ անզամ ևս համոզվեցին, վոր հրայանի ու թնդանոթի դեմ իրենց թնդանոթը, հրացանն ու գնդացիրը պետք է ունենան։ Սակայն խնդիրը միայն այդ չեր։ Պետք եր յարական բանակն ել կազմալուծել ու բայլշերի, ստիպել այդ բանակին բանվորների հետ գնալ, չենց այդ բանի համար ել բանվորներից մարտական խմբեր կազմակերպելու հետ մեկտեղ, կոմունիստները բանակում բայլշերի կական բջիջներ կազմակերպեցին։ Դժվար եր այդ

բանն անել, բայց բանվորների յերկաթե կամքը բոլոր դժվարությունները հաղթահարեց. 1905 թվի սկզբին արդեն, Ռուսաստանի զանազան ծայրերում, բանվորների մարտական խմբերը հաճախ հաղթող ելին գուրս դալիս ցարական վարձկանների դեմ մղվող կռվում:

Խմբերը հեղափոխականորեն արամագրված բանվորներից ու գյուղացիներից ելին բաղկացած: Յարական բանակի դասալիք զինվորները միանում ելին այդ խմբերին: Այդ խմբերը մասնավոր 1905 թվին կովկասում ելին լավ գործում, կառավարությանը մեծ փամփոխություն ու միաժամանակ չբռնվելով: Զոկատները սարսափ ելին ազդել կառավարական դորքերին ու փոստիկանությանը: Այդ ջոկատները «կարծիր ջոկատներ» (ցաւութեազմ) ելին կոչվում:

Մերձբալթյան յերկրում, — այժմ Լիտվա, Լատվիա, Եստոնիա, ցարական բանակի կատաղի կոիմբերին հեղափոխական մեծ բանակն եր արդեն մասնակցում, վոր մոտ 60 հազար մարդ ուներ:

Մոսկվայում բանվորներից զինված հզոր, մեծ ջոկատներ ելին ստեղծվել: Կառավարությունն այդ ջոկատների դեմ իր բանակի լավագույն դնդերը Մոսկվա քաշեց: Բայց ելի հենց բանվորական գուգասները, վոր Մոսկվայի բոլոր

աշխատավորների անսահման ոգնությունն է՝ յին վայելում, տասներկու որ դիմագրությունն էյին ցույց տալիս: Այս բանը 1905 թվի դեկտեմբերին եր: Գուգասները մոտ 10.000 մարտիկից ելին բաղկացած: Այդ տասնյակ խմբերի դեմ՝ թնդանոթներով զինված հարցութափոր գընդեր ելին գնում:

1905 թվին բոլոր քաղաքներում բանվորները զենք վերցրին: Գյուղն ել վոտքի յելավ: Յեղաններով, գերանդիներով ու կացիններով զինված՝ նրանք ազլում ելին կալվածատերերի ագարակներն ու վոչնչացնում ելին ազնվականների վորչերը: Բայց գյուղացիությունն անկազմակերպ եր, մանը խմբակներով ելին գործում, ուստի և ցարական դահիճներն արագ ու անխիղճ կերպով ճնշում ելին նրանց:

Բանվորներին ջախջախելուց հետո, ցարական կառավարությունը 1905—1906 թվականների ժողովրդական ապստամբությունը բանվորա-գյուղացիական արյան ծովում խեղդեց: Կախաղանը, մարակն ու գնդակահարությունները քաղաքի բանվորների ու գյուղի ռանչպարհերի դեմ դարձեց: Զգայնացնող մի պատերազմ եր: Սակայն բանվորներն ու գյուղացիներն խացան, թե ինչպես պետք է կովեն, հասկացան, վոր



առանց ուշի ունենալու՝ ցարական իշխանության դեմ հաշիվ տեսնելը հեշտ բան չեւ:

Մութ կամայականության որեք սկսեցին: Վոստիկանության կրնկի տակ ամեն ինչ կործանվեց, ճզմվեց ու յերկը յերեսից սրբվեց: Սակայն կոմունիստները (բայց և կներն) այդ ժանր պարագաներում ելի հենց նոր կովի պատրաստություններ ելին տեսնում, մասսային նոր կովի համար իրար ելին միացնում, բանվորներին հաղթանակելու կամք ելին ներշնչում: Յեվ հույսերն իզուր չանցան: 1912 թվին Սիբիրի Լենայի հանքերում բանվորներին գնդակահարելը նրանց ընդհանուր գործադրութիւննեց, ու միայն 1914 թվի պատերազմն եր, վոր աշխատավոր ժողովրդի ու շաղրությունն իրեն վրա դարձեց: Բայց պատերազմը միաժամանակ նաև ցարական կառավարության գերեզմանափորն ու փթող ինքնակալություն վերջին հարվածը դարձավ:

Ֆրանսիական ու անգլիական կապիտալիստները նուսասատանը պատերազմի մեջ քաշեցին: Կալվածատերերն ու բուրժուազիան պատերազմով շահագուգոված ելին, վորովհետեւ պատերազմը նրանց ձեռնտու յեր: Պատերազմը Տաճառասահառ նոր հողեր խլելու համար եր մղվում Յեվ, բացի այդ, աճող հեղափոխու-

թյան սպառնալիքի առջև ցարական կառավարությունն ուրիշ յելք չեր գտնում: բանվորներին ու գյուղացիներին խրամատների մեջ թագցնելուց բացի, ուրիշ բան չեր կարող անել:

Բանվորներին ու գյուղացիներին նոր հողեր պետք չեն, նրանց խաղաղություն և իրենց կապիտալիստներից ազատազրվել ե պետք: Նրանց ուրիշ կովի եր պետք, — կովի պատրաստություններին: Բանվորներն ու գյուղացիները փորձում ելին կենինզրադում ու Բագվում գործադուլ անել և այդպիսով պատերազմի դեմ բողոք հայտնել: Սակայն ցարական կառավարությունն այս անգամ ել հաղթանակեց, ճիշտ ե, վերջին անգամ: Բանվորներն ու գյուղացիները խրամատներ գնացին հարուստների համար կովելու: Բայց ծանր փորձերն ու զրկանքները բանակն ել փոխեցին: Բանակը միուրիշ բան դարձավ, այս այն կուրը չեր, վոր 1905 թվին բանվորների վրա յեր կրակում: Բանակը համաշխարհային սպանդանոցի սովորեցրածն եր ու հասկացավ՝ թե ով եր իսկական թշնամին: Այս բանում բայց և կների կուսակցությունն ել բանակին ոգնեց: Պատերազմի ժամանակ բայց և կները մնացին միակ քաղաքական կուսակցությունը, վոր ի լուր ամբողջ աշխարհի բարձրածախ բողոք հայտարարեց պատերազմի դեմ, վոր արտասահմանում, Իլլիչի

ղեկավարությամբ, հավաքեց մյուս յերկրների սոցիալիստներին։ Պատերազմը—պատերազմի դեմ։

1917 թվականի մոտերքը քաղաքներում ու գյուղերում ապրուստը դժվարացավ։ Լենինգրադի բանվորներն ապստամբեցին ու փողոց դուրս յեկան։ Բանակի զինվորները միացան նրանց ու թագավորը տապալվեց։

Բայց կոիմ այսքանով չվերջացավ։ Բանվորների թշնամիներից դեռ շատ կային։ Պետք եր կոիվը շարունակել։

Իշխանության գլուխ կանգնեց բուրժուազիակի կառավարությունը, վոր պատերազմին վերջ տալու մասին չեր ել մտածում։ Հականեղափական գեներալներն իրենց զորքելով շարունակեցին մնալ մայրաքաղաքում։ Բանվորները 1905 թվի ու 1917 թ. Փետրվարյան հեղափոխության մեջ փորձվել ելին, նրանք կարուիր գվարդիա ստեղծեցին ու զինվեցին։

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Միապետությունը տապալելուց հետո կերենսկու կառավարությունը շարունակում եր պատերազմը Գերմանիակի և Ավստրո-Հունգարիակի դեմ։ Պատերազմը նոր գոհեր եր տանում։ Պատերազմն աշխատավոր ժողովրդին թանգ նըս-

տեց։ Ընդամենը 3.000.000 մարդ սպանվեց։ Այս թվի մեջ դեռ չեն մտնում մարդկային այն զոհերը, վոր համաճարակը ժողովրդից խլեց։ Չի մտնում ծննդաբերության նվազումը և այլն։ Բոլոր յերկրներում պատերազմն աշխատավոր ժողովրդին 36 միլիոն կյանք նստեց։ Բացի այդ, ճնշումներն ու անեն տեսակի հարկերն ավելացան, թանգությունն աճեց։ Բուրժուազիան կերենսկու որով ևս շարունակում եր հարստանալ։ Այդ պատճառով ել Լենինգրադի բանվորներն ապրիլին փողոց դուրս յեկան, պահանջելով՝ «Իշխանությունը—խորհուրդներին», «հողը—գյուղացիներին»՝ «կոիվ—պալատներին», «ազատություն—աշխատավորներին»։ Բանվորները դուրս յեկան բայց կենսերի դեկավարությամբ, Մինչ այդ, ամեն մի ֆաբրիկում, ամեն մի գործարանում կարմիր գվարդիակի մարտական ջոկատներ կային։ 1917 թվի հունիսին Կարմիր գվարդիայի թիվը 10.000 մարդու հասավ։ Սակայն վոչ միայն Լենինգրադում, այլև մյուս քաղաքներում ել Մոսկվայում, Իվանովո-Վոլգոնենսկում, Դոնի ավագանում, Ռուսական եր բանվորները մարտական ջոկատներ ելին ստեղծում։ Բանվոր դասակարգն իր բանակն եր կոում ու կոփում։ Ապրիլան ցուցին բանվորները զինված դուրս յեկան։ Բուրժուազիան վախեցավ։ Սկսեց

միջոցներ ձեռք առնել կարմիր գվարդիան զի՞նաթափ անելու։ Սակայն բանվորներն ելի հենց կարողացան հնարը գտնել ու ֆաբրիկալին մի-լիցիալի անվան տակ ջոկատներ պահել, նոր զենք, նույնիսկ գնդացիր ձեռք բերել Հուլիս-յան անհաջող յելութից հետո, այս բանն առանձ-նապես լենինգրադի բանվորներն ստիպված յեղան անելու։

Բանվորները հուլիսին դուցի դուրս յեկան ու հրացանի բանվեցին յունկերների ու կերենս-կու զինվորների (կազակների) կողմից։ Այս բա-նից հետո սկսվեցին զինված հարձակումները բայց կիկների կոմիտեների վրա. տեղի ունեցան առաջնորդների ձերբակալություններ ու վորոշ բայց կիկների սպանություններ։ Բայց կարմիր գվարդիալին չհաջողվեց վոչնչացնել բուրժուա-դիալին. Բուրժուազիան իր հարվածող ջոկատներն եր ստեղծում։ Գեներալները նույնպես քնած չե-ցին։ Կորնիլովը լենինգրադի վրա շարժվեց։ Ա-հա հենց այստեղ ել պարզվեց բանվորների ուլիթն ու կազմակերպվածությունը։ Բանվոր դասակար-գը վրդովված մրջնոցի պես ցնցվեց։ Կար-միր գվարդիալի ջոկատներն սկսեցին շտապ լրացվել, ուժեղ կերպով պատրաստվել ու զենք ձարել. Շիսուլբուրգից յեկող Կարմիր-գվարդիա-կաններն իրենց հետ մի նավ ոռոմբ ու կիզա-

նյութ բերին։ Կարմիր գվարդիան զինվեց ու ել ավելի ուժեղ դարձավ, քան հուլիսյան որե-րին եր։

Բայց այդ ժամանակ մանավանդ հաջող եր գնում Հոկտեմբերյան հեղափոխության զինված ուժեր ստեղծելու աշխատանքի մյուս մասը—բանակը քայլացի եր այդ։ Զինվորները տուն գնալու համար գլուխ ելին պատռում։ Նրանք պահանջում ելին վերջ տալ պատերազմին։ Բայց շեկները կոչ ելին անում զինվորներին՝ կովկելու խաղաղության, հողը գյուղացիներին տալու հա-մար։ Զինվորները ձեռքից ձեռք ելին թոցնում «Խրամատակին ճամարտություն» («Օկոպայ պարագաներ լրագիրը։ Բայց կիկների ազգեցությունը բանակում զնալով մեծանում եր։ Զինվորները բայց կական բջիջների շուրջն ելին համախմբվում։

Կոմունիստական կուսակցությունը բանվոր-ներին ու գյուղացիներին նոր կոկվների համար եր կազմակերպում, բանվորներին Կարմիր գվար-դիալի մարտական ջոկատների մեջ եր համա-խմբում, միաժամանակ գյուղացիական բանակ կազմակերպելով։ Իսկ յերկրի գրությունը գնա-լով ավելի ու ավելի վատանում եր։ Կարգածա-տերերի ագարակները վառվում ելին, բանվոր-ներն ու գյուղացիները խռովություններ ելին

սարքում, ավելի ու ավելի բարձր եր հնչում այս կոչը՝ «Ամբողջ իշխանությունը Խորհուրդներին»:

Պետրոգրադի խորհուրդը Ռազմա—հեղափոխական կոմիտե ստեղծեց, վորին յենթարկվում ելին Պետրոգրադի կայազորի (գարնիզոնի) բոլոր մասերը։ Կոմիսարներ նշանակվեցին։ Կոմիսարների կարգադրություները, զենքերը հանձնելու մասին առանց ուշացնելու կատարվում ելին, այսպես որինակ, Սեսարորեցկի զինազործարանն անհապաղ 5.000 հրացան հանձնեց։

Հոկտեմբերի կեսերին լենինգրադի (Պետրոգրադ) Կարմիր գվարդիան 14 հազար ռազմիկուներ, վորոնք հրացաններով ու գնդացիրներով ելին զինված ու տանկեր ունելին։

Յեկ պալթեց վորոտը։

Հոկտեմբերյան կովկան մասնակցող Կարմիր գվարդիականներից մեկը պատմում է.

«Հոկտեմբերի լուս 25-ի գիշերն եր, կենարոնը վորոշել եր դուրս գալ, Շրջաններին կարգադրել ելին գրքերը, դոկումենտները, կուսակցության ու Կարմիր գվարդիայի անդամների ցուցակները թագցնել։ Այս բոլորը, ի հարկե, հենց այնպես՝ զգուշության համար եր արվում, ինչ վոր հանդիսավորություն ու մարդկանց ջղերի լարվածություն եր զգացվում».. Իսկ այսուհետև.

«...Կես գիշերի մոտ եր. «Ավրորա» հածանավի թնդանոթները վորոտացին, հրացանները պապտացին, գնդացիրները ճլոճըտացին։ Մեր ջոկատները մասնակցեցին Զմեռալին ովալատը վերցնելուն, հեռախոսային կայանը, պետական բանկը գրավելուն, Սմոլնիի պաշտպանության, Պետրոպավլովսկի բերդը մտան և այն։ Հետևելորերում Վիբորգի Կարմիր գվարդիականները մասնակցում ելին Վլադիմիրյան յունկերների դպրոցի վրա գրոհ տալուն, հեռախոսային կայանը յետ խլելուն»..

Կարմիր գվարդիան ամենավտանգավոր տեղեր եր մտնում, բանվորների կողմանցած—կերենսկու հարվածող ջոկատների զինվորների հետ ամեն տեղ հաղթություն տանելով սպիտակ գվարդիական ջոկատների դեմ։

Մոսկվայում Կարմիր գվարդիան թույլ եր, ուստի Մոսկվայի բանվորները մեծ զոհերի գնով հաղթանակ տարան և այն ել վոչ այնքան շուտ։ Մի ամբողջ շաբաթ Մոսկվայի փողոցներում բուրժուական զորքերի, զիխավորապես յունկերների ու կազակների և Կարմիր գվարդիայի միջն կատաղի կորիներ ելին տեղի ունենում։ Սակայն Կարմիր գվարդիան այստեղ ել հաղթող դուրս յեկավ։

Բայց հաղթություն տանելը, իշխանություն

գրավելը քիչ եր. անհրաժեշտ եր այդ իշխանությունն իրենց ձեռքում պահել:

Կարմիր բանակը վոչ միայն քաղաքում եր կովում, այլ և դաշտ եր դուրս գալիս: Պետրոգրադի տակ, Պուլկովոյի մոտ կովում եր Կերենսկու զորքերի մասցորդների հետ: Ահա, հենց այստեղ եր, վոր պարզեց առավել վարժության ու կազմակերպվածության անհրաժեշտությունը: Քաղաքում Կարմիր գվարդիան լավ եր կովում, բայց դաշտում կովելու համար սովորել ե պետք: Իսկ Խորհուրդները բուրժուազիալի ու գեներալների ճնշումից պաշտպանելու համար՝ կացությունն ինչ-վոր զինված նոր ուժեր եր պահանջում:

Խորհրդային իշխանությունը Գերմանիայի հետ ծանր պայմաններով հաշտություն կնքեց ու ցարական հին բանակը զորացրեց (բաց թողեց տները): Այդ բանակն ել չեր կարող պաշտպանության գործին ծառայել: Անհրաժեշտ եր մի ուրիշ՝ այլ ձևով կառուցված բանակ: Յարական հին բանակին փոխարինելու համար կոմունիստական կուսակցությունն սկսեց Կարմիր գվարդիայից արագ կերպով բանվորա-գյուղացիական Կարմիր բանակ ստեղծել:

## ԿՈՒՎԵ ԳԵՆԵՐԱԼՆԵՐԻ ԴԵՄ ԴՈՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՅԵՎ ՈՒԿՐԱՅՆԱՅՈՒՄ

Կերենսկին ու գեներալ Կրասնովը Պետրոգրատից փախած զորքի մասցորդների հետ հարձակում գործեցին Կարմիր գվարդիայի վրա: Զնայած Կրասնովի կազակ զորքերի լավ զինվածության ու կազմակերպվածության, Կարմիր գվարդիան հետ շպրտեց նրանց, ջախջախեց ու գերի վերցրեց հենց Կրասնովին իրեն:

Բայց ամեն տեղ Կարմիր գվարդիայի գործողությունները հաջող չելին գնում: Լենինգրադում և կենտրոնական արդյունաբերական շրջանում — Մուկվայում, Իվանովո-Վոլգոնեսենսկում, ուր բանվորները շատ են, ինչպես և չքափոր գյուղացիների մեջ հեղափոխական վստահելի մարտիկներ շատ կային: Ուսւսաստանի ծայրամասերում բանը լավ չեր: Սպիտակ գեներալներն այնտեղ փախան, այնտեղ նրանք սկսեցին սուր սրել Խորհրդային Հանրապետության՝ բանվորների ու գյուղացիների իշխանության դեմ: Ուկրայնա ու Դոնի շրջանը բազմաթիվ հին սպաներ, գեներալներ, Լենինգրադից ու Մուկվայից վնադված բուրժուազիան հավաքվեցին և սկսեցին սպիտակ գվարդիա կազմակերպել: Գլխավոր ուժերը Դոնի վրա Կալեղինի, Կարմիրովի և Ալեքսեյի առաջ-

Նորդությամբ ելին հավաքում, իսկ արևելքում՝  
Դուտովի առաջնորդությամբ: Ուկրայնայում բուր-  
ժուական իշխանություն եր. բուրժույները կա-  
լեզինին ոգնում ելին: Խորհրդացին իշխանության  
առջև հետեւալ խնդիրները ծառացան.— ջախջախել  
կալեղինին և ոգնել Ուկրայնայի բանվորներին  
ու գյուղացիներին, վոր նրանք իրենց յերկրում  
բանվորական իշխանությունն ամրապնդեն: Կար-  
միր գվարդիան այդ խնդիրն արագ գլուխ բերեց:  
Այդ որերին Ուկրայնայի բանվորները բուրժուա-  
զիացի իշխանությունը տապալեցին ու Խորհուրդ-  
ներ հիմնեցին: Բայց Դոնի վրա կատաղի կոփվ  
եր: Մի կողմից՝ կալվածատերերի ճտերից, սպանե-  
րից, լունկերներից, կուրակներից ու փոստի-  
կանությունից բաղկացած սպիտակ գվարդիան  
եր, մյուս կողմից՝ բանվորներից ու գյուղացիներից  
բաղկացած Կարմիր գվարդիան եր: Կարմիր գվար-  
դիային յերբեմն ցարական քայլայված բանակի  
կամագոր ջոկատներ ելին միանում: Ցարական  
բանակը տներն եր փախել: Հունվարի 29-ին  
Խորհրդացին զորքերը գրավեցին Կիևն ու վորո-  
դեցին Ուկրայնական բուրժուաների իշխանու-  
թյունը—այսպես կոչված կենտրոնական Ռադան:  
Հունվարի 18-ին արևելքում Կարմիր գվարդիա-  
կանները ջախջախեցին Դուտովին ու գրավեցին  
Որենբուրգը:

Փետրվարի 24-ին Դոնի հանքավորների ջո-  
կատները Մոսկվայից ու Լենինգրադից ոգնու-  
թյան յեկածների հետ գրավեցին Դոնի Ռոստովը՝  
սպիտակ գվարդիականների նախկին գլխավոր  
փախստատեղին:

Կարմիր բանակն ամենուրեք հաղթանակում  
եր: Լավ մարզված ու զինված սպիտակ գվարդիա-  
կանները տեղի ելին տալիս Կարմիր բանակի ու  
վերջինիս հեղափոխական անվեհներության առաջ:  
Խորհրդացին իշխանության համար մղած պայքա-  
րի պատմության մեջ Կարմիր գվարդիան հերո-  
սական շատ եղեր ե բաց արել: Բայց Կարմիր գվար-  
դիան գլխավորապես անվեհներությամբ ու գոր-  
ծողության վճռականությամբ եր հաղթում, այլ  
վոչ թե վարժությամբ: Այդ պատճառով ել կալ-  
վածատերերի ու ֆաբրիկատերերի սպիտակ բա-  
նակների հետ մղվող կոփվը նրանց համար դժվա-  
րացավ, յերբ ոտարերկրացի կապիտալիստներն  
սպիտակ բանակներին ոգնության յեկան:

Այստեղ պետք եր լավ մարզված ու կազմա-  
կերպված բանակներ ու շտաբներ ստեղծելու  
մասին մտածել:

ՈՏԱՐԵՐԿՐՅԱ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ԽՈՐՉՈՒՐԴՆԵՐԻ ԴԵՄ  
(1918)

Խորհրդացին իշխանությունը բոլոր հողերը,  
ֆաբրիկները, գործարաններն ու բանկերը պե-

տական, այսինքն՝ բանվորների ու գյուղացիների սեփականություն հայտարարեց:

Այսպիսով Խորհրդային իշխանությունը վոչ միայն ոռուսական, այլև ոտարերկրյա կալվածատերերին ու կապիտալիստներին քարուքանդ արեց: Անզիւական ու ֆրանսիական բուրժույները Ռուսաստանում հող, ֆաբրիկ ու գրամ ունեին և հեղափոխությունը նրանց սաստիկ կրծում մաշում եր: Խորհրդային իշխանությունը պատերազմին գեմ դուրս յեկավ, իսկ ֆրանսիական ու անգլիական կապիտալիստներն ուղղում ելին պատերազմը շարունակել: Խորհրդային իշխանությունն սկսեց ճնշված ազգություններին դարավոր ստըրկությունից ազատագրել, բայց այդ բանն Անզիւային, վոր բազմաթիվ սարուկներ ունել, ձեռնտուչեր: Խորհրդային իշխանությունը—բանվորների ու գյուղացիների իշխանությունը—կապիտալիստների հետ ունեցած պայքարի մեջ համայն աշխարհի բանվորներին ու գյուղացիներին որինակ գարձավ: Կապիտալիստները չելին ուղղում այդ բանը թույլ տալ: Ռուսաստանում Խորհրդային իշխանության գոյության ամեն մի որը նրանց համար սպառնալիք եր:

Կարմիր գվարդիայի ու սպիտակ գվարդիականների ծափակող պայքարին բոլոր յերկրների բուրժուազիան ու շաղբությամբ հետևում եր: Յեզ

ահա, յերբ այդ բուրժուազիան տեսավ, վոր կարմիր գվարդիան հաղթանակում ե, ու սպիտակ-ները փախչում են, ինքն ել խառնվեց այդ կռվին և իր զորքերն ու զենքերը կարմիր զորքերի դեմ ուղարկեց:

Կապիտալիստներն ուղում ելին Խորհրդային իշխանությանը ձգմել, հեղափոխության արյան մեջ խեղզել: Բայց նրանց հույսերը չարդարացան. Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների, հեղափոխական կարմիր զորքերի համառության և ուշի դեմ կապիտալիստները վոչինչ չկարողացան անել:

Սկսվեց Գերմանիայից: Խորհրդային իշխանությունը բոլոր յերկրներին հաշտություն առաջարկեց: Բայց Գերմանիայից վոչ վոք չարձագանգեց:

Սակայն Խորհրդային կառավարության հետ հաշտության բանակցություններ վարելով հանդերձ, Գերմանիան իր զորքերն առաջ շարժեց: Տեխնիկայի վերջին խոսքով լավ մարդկած ու զինված գերմանական զորքերն սկսեցին հաղթել կարմիր Գվարդիական ջոկատներին: Գերմանացիները գրավեցին համարյա վողջ Ռւկրայնան ու սպառնում ելին Պետրոգրադը (Լենինգրադը) վերցնել: 1918 թ. ապրիլի 7-ին նրանք գրավեցին Խարկովը, իսկ մայիսի 9-ին՝ Դոնի Ռոստովը:

Գերմանիայի հետ ծանր պայմաններով հաշտություն կնքվեց, բայց Լենինը դեռ այս ժամանակ ընդունում եր, վոր Խորհրդային իշխանությունը պահելու համար պետք է այդ առաջարկն ընդունել:

Սակայն անվտաս պրծած կարմիր գվարդիական ջոկատներն ել այդ որերին կարողանում ելին լավ հականարդած տալ Ռումինիային, յերբ վերջինս փորձում եր Ողեսսան զրավել: 1918 թվի փետրվարին Կարմիր ջոկատները նրանց այնպես ջարդութշուր արին, վոր ոռոմինները Ողեսսան զրավելու փորձերը մտներից հանեցին:

Նախքան կարմիր բանակ ստեղծելն անհրաժեշտ եր հին բանակն արձակել, ուստի գլխավոր ուշադրությունը ցարական բանակի զինվորներին տուն թողնելու վրա յեր կենտրոնացած:

Նոր բանակի կազմակերպումը, սկզբում կամավորական հիմունքներով, Լենինգրադում միայն տեղի ունեցավ:

Փետրվարի 23-ին՝ ամբողջ Ռուսաստանում Բանվորա-գյուղացիական կարմիր բանակ ստեղծելու գեկրետ հրատարակվեց: Այդ գեկրետի համաձայն կարմիր բանակը համեմատաբար ավելի գիտակց ու կազմակերպված, 18 տարեկանի հասած աշխատավորներից ու կամավորներից պետք է կազմվեր, կարմիր բանակ մտելիս կուսակա-

կան կամ արհմիութենական մարմինների լերաշխավորություն եր պահանջվում: Փետրվարի 23-ը Բանվորա-գյուղացիական կարմիր բանակ ստեղծելու որ է համարվում:

Ամբողջ լերկում ռազմական բաժանմունքներ ստեղծվեցին ու կամավորների ցուցակագրություն հայտարարվեց:  $2\frac{1}{2}$  ամիս հետո կարմիր բանակում 100.000 մարդ կար: Բանակը բանվորներն ու գյուղացիներն ստեղծեցին, իրենց միջից լավագույն մարտիկներ տալով: Այդ բանակը կազմակերպողն ու կառուցողը կոմունիստական կուսացությունն եր, կարմիր բանակ բանվորներ, չքավորներ, բատրակներ ելիս մտնում, կոփլսերում կոված ու կոփկած կարմիր գվարդիական ջոկատներ ու ցարական հին բանակի զինվորներ ելին մտնում:

Խորհրդային իշխանությունը միաժամանակ բանվորներից ու գյուղացիներից հրամանատարներ պատրաստելու գործն ե կարգավորում ու այդ նպատակով դասընթացներ ստեղծում: Կարմիր գվարդիական ջոկատների հրամանատարները հենց իրենց բանվորները կամ զինվորներն ելին, վորոնք ցարական բանակից ելին յեկած և առաջ ելին քաշված յեղել սպիտակ-գվարդիականների հետ ունեցած կոփլսերի ժամանակ: Սկսեցին հին սպաններին ել կանչել: Նրանց մեջ կային այնպիսի-

ները, վորոնք աղնիվ ելին ու կարմիր բանակ ստեղծելու համար շատ բան ելին արել։ Հրամանատարներն սկսեցին նշանակվել։ Բայց նրանց աշխատանքների վրա հսկելու համար սկսեցին ամեն մի հրամանատարին կից՝ կոմունիստական կուսակցության անդամներից կոմիսար նշանակել։ Կոմիսարները բանվոր դասակարգի լավագույն, գիտակից ու վճռական ներկայացուցիչներից ելին նշանակվում։ Շնորհիվ այդ կոմիսարների ու կոմունիստական բջիջների աշխատանքների՝ կարմիր բանակը կարճ ժամանակում կարողացավ ամրապնդվել ու դիմանալ ոռուսական և ոտարերկրյա կապիտալի զորքերի դաժան կռիվներին։

Կարմիր բանակ կազմակերպելու գործում գլխավոր քայլն այն եր, վոր զորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայություն մտցվեր։ Այդ աստին դեկտեմբեր 1918 թ. հունիսի 12-ին հրատարակվեց։

Այդ որերին Խորհրդավին յերկրի գլխին ամպրոպի առաջին հարվածը ճայթեց, յերբ յերկրի ներսում թշնամի - չեխոսլավակները յերեան յեկան։

Չեխոսլավակներից կերենսկին մի կորպուս եր կազմակերպել գերմանացիների դեմ։ Յերբ գերմանացիները հարձակում գործեցին, այդ կորպուսը հրաժարվեց կռվել ու խնդրեց, վոր իրեն ֆրանսիա ուղարկեն։

Խորհրդավին իշխանությունը համաձայնեց այդ առաջարկին ու սկսեց կորպուսի մասերը Սիբիր շպրտել, վոր այնտեղից նավերով ուղարկի։ Բայց ճանապարհին չեխոսլավակներն սկսեցին կարմիր զորքերին զինաթափ անել, խորհուրդները ցրիվ տալ ու բուրժուական իշխանությունը վերականգնել։ Զեխոսլավակներն այդ բոլորն անգլիական ու ֆրանսիական կապիտալիստների ոգնությամբ ելին անում։ Նրանք դրավեցին այբողջ Վոլգան՝ վողջ հացաշատ շրջանն ու արդպիսով սպառնում ելին Մոսկվայի ու Լենինգրադի բանվորներին սովոր խեղղել։ Յերիտասարդ կարմիր բանակի ջոկատները լավ չելին կարողանում կռվել չեխոսլավակների դեմ, վորոնք միշտ նորանոր հաղթություններ ելին տանում։ Զեխոսլավակների հովանավորության տակ Սամարայում ես-երների հակահեղափոխական մի կառավարություն ե ստեղծվում, իսկ Սիբիրում Կոլչակն ե յերեան գալիս, վոր հետո իրեն «համայն Ռուսաստանի կառավարիչ» ե հայտարարում։ Հյուսիսում՝ Արխանգելսկում յերեսուն հազար անգլիացի, ութ հազար ֆրանսիացի, հինգ հազար սեբը ու և 15 հազար բելգիացի ու կանադցի յեն ափ իջնում։ Վոլգայի շրջանում 70.000 չեխոսլավակ կար, Սիբիրում 20000 ամերիկացի ու յապոնացի կար, Կովկասում անգլիա-

կան ու թուրքական զորքերն ելին, իսկ Սիրիում դեռ չինական զորքեր ել կալին: 1919 թ. ամբողջ Ռուսաստանում ընդամենը 500.000 ռտարերկացի զորք կար: Այս թվի վրա պետք է ավելացնել Ռուսական սպիտակ գվարդիական բանակները—արեելքում՝ Կոլչակը, հարավում՝ Դենիկինը, հյուսիսում՝ Միլերը և Լենինգրադի մոտ՝ Յուգանիչը: Խորհրդային Ռուսաստանը սեղմվեց, մի փոքրիկ՝ հրեղեն, Կարմիր ողակ մնաց: Բանվորն իր ուժերը լարեց ու չորս կողմից պաշտպանվեց:

Սակայն, միայն ծավալված ճակատով չե, փոր ուստական և ռտարերկացի կապիտալիստները չորս կողմից սեղմում են Խորհրդային յերկիրը: Ողակի ներսում հականեղափոխությունն իր ցանցն ունի ու թիկունքն ե քայլվում: Յարոսլավլում հականեղափոխական ապստամբություն ե ծագում: Կարմիր զորքերը մի քանի որ ստիպված են լինում կովելու Յարոսլավլում դարձն մտած (թագ կացած) սպիտակ գվարդիականների դեմ: Հեղափոխության առաջնորդների վրա հարձակումներ են կազմակերպվում: Պետրոգրադում սպանվում են ընկ. ընկ. Ռուբիցին ու Վլոդարսկին: Ընկ. Տրոցկու դեմ մահափորձ ե պատրաստվում: Յեզ, վերջապես, ստոր մարդասպաններին հաջողվում ե վլադիմիր

Իլիչ Լենինի իշանքի դեմ մահափորձ կատարել: Ամեն կողմից՝ թե՛ ճակատից ու թե թիկունքից հականեղափոխությունը հարձակում ե գործում: Վտանգը մեծ եր: Խորհրդացին իշխանության վիճակն անասելի ծանր եր: Բայց Կարմիր բանակը թշնամիներից սովորել եր, թե ինչպես պիտի հաղթի: Բանակի առանձին մասերն ու ջոկատները միանում, գնդեր ու դիվիզիաներ ելին կազմում: Նրանք այս չեն նահանջում, նրանք ձգտում են հարձակման անցնել: Սպիտակներին չհաջողվեց Մոսկվա խուժել, կարվածատիրոջ ու ֆարբիկատիրոջ իշխանությունը վերադառնել, բանվորներին վոչնչացնել, վորհանդինել են իշխանությունն իրենց ձեռքը վերցնել:

Խորհրդային իշխանությունը նորանոր զինակոչեր ե հայտարարում, կուսակցության և արմիության անդամները զորակոչվում են: Ամբողջ յերկրը ճակատի համար եր աշխատում: Ամեն ինչ ճակատի համար:

Տեղի յե ունենում հանկարծակի փոփոխություն: Կոմունիստներն իրենց հետ աշխատժություն ու հաղթանակելու վատահություն բերին զորամասեր: Զորամասերն սկսում են ամբապնդվել. 1918 թվի սեպտեմբերի 8—ին հարձակման են անցնում ու գրավում Կազան:

Սկսում ե չեխո-սլավական ու սպիտակ գվարդիական զորքերի արագ նահանջ: Հոկտեմբերի 12-ին Կարմիր բանակը գրավում է Սիմբիրսկը, հոկտեմբերի 7-ին Սամարա յե մտնում, ուր նրան դիմավորում են սպիտակ գվարդիականների դեմ ապստամբած բանվորները:

Յրտին, ձյան վրա վոտաբողիկ ու կիսամերկ, հաճախ առանց փամփուշտների, միայն նիզակ-ներով-կարմիր բանակալինները վերցնում են Բուգուրուսլանը և Ուֆան, ու մանր կոիվներով - Ողենբուրգ և Ոմսկ բաղաքները: Այսպես ե պսակում ես-երական սահմանադրական կառավարության հականեղափոխական զորքերի դեմ կատարած արշավանքը:

• Հենց այդ ժամանակ Կարմիր բանակին հաջողվում ե յետ մղել ոտարերկրյա զորքերի հարձակումը հյուսիսի վրա:

Գերմանիայում՝ 1918 թ. նոյեմբերին բան. վորներն իրենց թագավոր Վիլհելմին գահընկց են անում: Գերմանական զորքերը լսելով հայրենիքում ծագած ապստամբության մասին ու գտնվելով ոռւսական հեղափոխության տպավորության տակ, սկսում են ազատել Ուկրանան ու ցըվել տները: Ժողովուրդն ապստամբում ե. զերմանական նահանջող բանակին կրնկակոյ՝ Կարմիր զորքերն ողնության են գնում ապստամբ

ժողովրդին: Բելոռուսիան, Լատվիան ու Եստոնիան խորհրդային հանրապետություններ են դառնում:

Ուկրանայում կարմիր ապստամբներն սպիտակ գվարդիականներին ջարդում, Կարմիր բանակ են ստեղծում ու վերականգնում են խորհրդային իշխանությունը:

Սակայն գնացող գերմանական զորքերին փոխարինելու համար Ողեսսա Փրանսիական, իսկ Նիկոլաև հունական զորքեր են ափ հանվում: Ֆրանսիական զորքերի մեջ սեամորթ շատ գնդեր կային: Բանվորներից բաղկացած իր գնդերի վրա բուրժուազիան հույս չեր զնում: Նրա յերկուղն արդարացավ: Հենց վոր Փրանսիական զորքերը կարմիր բանակի հետ ընդհարվեցին, վերջինիս նրանք չկարողացան դեմ դնել: Հեղափոխական ագիտացիան, հեղափոխության վերելքն ու Կարմիր զբաղներն ազդում եին Փրանսական ու հունական զինվորների վրա: Ֆրանսիական զորքերի մի մասը բաց գրոշակներով կարմիրների կողմանցավ: Մյուսները ճակատից հեռացան ու գեներալներից պահանջեցին՝ վոր իրենց տուն ուղարկեն: Նավատորմում խմորումն սկսվեց:

Կարմիր բանակն Ուկրանայում ել հաղթող հանդիսացավ: Ուկրանան խորհրդային դարցավ:

1918 թվի վերջերին ու 1919 թվի սկզբներին, յերբ Կարմիր բանակը բազմաթիվ թշնամիների հետ իր հաշիվը աւեսավ, իր շարքերը մեծացրեց, մինչև 1,500,000 մարտիկի հասցրեց։ Սպիտակ գվարդիականների հարձակումն ու խորհրդացին իշխանությանն սպառնալը զողեցին բանվորների ու գյուղացիների այդ բանակը և ամրապնդեցին նրա կապն աշխատանքի հանրապետության ամբողջ աշխատավորժողովով հետ։

Կապիտալիստները տեսան, վոր դժվար ենորհուրդներին տիրել։ Դանդաղ, բայց հաստատուն կերպով նորանոր արշավանքներ ելին նրանք պատրաստում Խորհրդացին անդրանիկ հանրապետության գեմ։ Կարմիր բանակին նոր ճակատամարտեր ու նոր փորձություններ ելին սպասում։ Բայց Կարմիր բանակը պատրաստ եր ընդունելու այդ ճակատամարտերն ու փորձությունները։

Վ. Ի. Լենինի նախագահությամբ Աշխատանքի ու Պաշտպանության Խորհուրդ—ԱՊԽ ստեղծվեց, վոր խորհրդացին իշխանությունը պահպանելու համար բոլոր ուժերի ու միջոցների մոքիլիցացիա արեց։

Ամբողջ էրկիրը պատրաստ երնոր կոփլսերի։

ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻ

1919 թիվը Կարմիր բանակի հաղթություններով սկսվեց։ Սակայն պատերազմը դեռ նոր եր սկսվում։ Թշնամին նոր հարձակումների պատրաստություններ եր տեսնում։ Թշնամին ուժեղ եր ու դաժան։

Արևելքում, Սիբիրում, Ուրալի լեռներից այն կողմն աղմիրալ Կոլչակը բանակ եր հավաքում։ Նա իրեն Ռուսաստանի «գերագույն կառավարիչ» հայտարարեց։ Ֆրանսիական, անգլիական ու յապոնական կապիտալիստները զենքով ու փողով սգնում ելին նրան։

Սիբիրի գյուղացիներն սպիտակբանակ մտնել չելին ուղում։ Կառնիլովը բռնի կերպով եր հավաքում։ անհնազանդներին գնդակահարում, կախաղան եր հանում։ Այսպես նա իրեն համար բանակ հավաքեց ու գարնանն սկսեց կարմիր զորքերի վրա շարժվել։

Զեխու-սլավակների դեմ մղած անընդհատ կոփլսերից տանջված, Կարմիր բանակը չի դիմանում Կոլչակի հարձակմանն ու սկսում են նահանջել։ Սակայն, ամբողջ խորհրդացին լերկիրը վոտքի լե կանգնում ե կոմունիստների նոր զորահավաք անում։ Կարմիր բանակն սկսում ե ամրապնդվել ու նոր ուժերով հավաքվել։

Իսկ այդ ժամանակ Կոլչակի բանակն սկսում ե քայլայվել: Այդ բանակը բռնի զորակոչի յենթարկված գյուղացիներից եր բաղկացած: Նրա բանակում ճիպոտի կարգապահություն եր թագավորում: Սպաները զինվորներին ծեծում, առանց դատարանի կախաղան ելին հանում: Սիրիում անգլիական, ֆրանսիական ու յապոնական բուրժուական զորքերն ելին յերկրի տեր ու տիրականը, նրանք թալանում ելին գյուղերը, զյուղացիները պարտիզանական խմբերի մեջ ելին մտնում, Կոլչակի զորքերի դեմ ելին կովում ու թիկունքում քանդում ելին ճանապարհները: Այս բոլորը քայլայում ելին Կոլչակի բանակը:

Կարմիր զորամասերը նորից են հարձակման անցնում: Կոլչակը փախուստի յե մատնվում ու նրա զորամասերը կարմիրների կողմն են անցնում: Թիկունքից պարտիզաններն են սեղմում: Նոյեմբերի 14-ին Կարմիր բանակը գրավում ե Կոլչակի մայրաքաղաքը — Ռմսկը: Սիրիուը գրաված եր: Թուրքեստանը միացել եր խորհրդացին Ռուսաստանին: Սպիտակ փոքրիկ բանդաներ ելին մնում: 1920 թվին Կոլչակը գերի վերցրվեց ու գնդակահարվեց:

Սակայն պատերազմը մենակ արեելքում չեր: Թէ արևմուտքում, թէ հարավում ու թէ հեռավոր հյուսիսում կարմիր բանակն ստիպված եր

հակահեղափոխության հարվածները հետ մղել:

Արևմուտքում, Լենինգրադի տակ, Եստոնիակի կողմից Անգլիայի ոգնությամբ ցարական հին գեներալ Յուդենիչն ե դուրս գալիս:

Լատվիայի և Եստոնիայի հեղափոխական զորքերն սպիտակ գվարդիական իրենց զորքերի հարձակումներին չեն լիմանում: Եստոնիայում ու Լատվիայում բանվորների խորհուրդները ցրիվ են տրվում և վերահաստատվում ե բուրժուական իշխանությունը: Վերջինիս և Անգլիայի ոգնությամբ Յուդենիչը Լենինգրադի վրա յե հարձակվում: Յուդենիչի լավ զինված և ուժեղ զորքերն սկսում են նեղել Կարմիր բանակին: Ծովից անգլիական նավերն ու աերոպլաններն ոգնում ելին Յուդենիչին: Ֆինլանդիան ե դուրս գալիս: Կարմիր բանակի թիկունքում՝ Կարմիր բլրի վրա — բերդում հակահեղափոխականներն են դավաճանում: Լենինգրադի անկումն անխուսափելի յեր դարձել: Բայց բանվորները, նավաստիներն ու կարմիր բանակայինները վոտքի յեն յելնում: Հեղափոխական նավաստիները Կարմիր բլրը հետ են վերցնում ու Յուդենիչին փախուստի մատնում: Ողոստոսին Յուդենիչի զորքերն Եստոնիա յեն շպրտվում: Եստոնիան սկսում ե հաշտության բանակցություններ վարել:

Հաշտության բանակցություններ վարելու

Ժուղենիչը նոր ուժեր և հավաքում ու հանկարծակի հարձակում և դործում կարմիր մարտիկների վրա։ Այս անգամ նրա ձեռքում տանկեր ու զրահապատ առանձին ավտոմորիներ ել կացին։ Տանկերը կարող են առուներ անցնել, պարիսպներ քանդել ու բոլորովին ճանապարհ չեղած տեղերով գնալ։

Առաջ տանկերն ելին գնում։ Կարմիր զորքերն իրարից կտրվում են։ Ճակատը ձեղքում ե։ Կարմիր բանակն սկսում է նահանջել, Լենինգրադը նորից վտանգի մեջ ե։ Բուրժուազիան այն աստիճան հույս ուներ, վոր իր թերթերում հայտարարեց, թե Լենինգրադը դրավել ե։ Սպիտակ գվարդիան թիկունքում՝ մեր բանակի մեջ իր համախոհներն ուներ, 7-րդ բանակի շտաբում դաշտաճաններ գուրս յեկան։ Յուղենիչը 25 վերստի վրա մոտեցավ Լենինգրադին և ըոպեառ ըոպե կարող եր կտրել անցնել Հոկտեմբերյան յերկաթ-գիծը։

Կարմիր բանակի գլխավոր ուժերն այդ ժամանակ արևելքում՝ կոլչակի դեմ ելին կովում, իսկ հարավում՝ Դենիկինի։ Սակայն բանվորների ու գյուղացիների մեջ ուժեր են ճարվում։ Կարմիր կուրսանտները, Լենինգրադի բանվորներն ու կոմունիստական ջոկատները մոտակա քաղաքներից Լենինգլադ են շպրտվում։

Լենինգրադն ինքնապաշտպանության լեռանգում պատրաստություններ եր ահենում։ Փողոցներում խրամատներ ելին փորում, ավազով լցված մեղոկներ ելին իրար վրա դարսում, ծակող յերկաթալարերից ստուներ ելին կանգնեցնում։ Կիսաքաղց բանվորունիներն ու յերեխաններն աշխատում ելին, ձգտելով փողոցների կռվին դիմավորելու և իրենց կյանքը թանգ ծախելու։ Հոկտեմբերի 21-ին Յուղենիչը վերջին հենարանի՝ Պուլկովոյի վրա հարձակվեց, բայց Կարմիր զորքերի կողմից հետ շպրտվեց։ Կարմիրներն ել տանկեր ունելին։ Պուտիլովի գործարանի բանվորները միքանի որվա մեջ տանկեր շինեցին ու ճակատ շպրտեցին։

Կարմիր զորքերը քշեցին Յուղենիչին, ու 919 թվի վերջերքին նրան Նարվա գետի այն կողմը շպրտեցին։

Կարմիր բանակը հարավում ստիպված յեղավ մեծ փորձությունների դիմանալու։ Ուկրանայում, Դոնում, ու Կուբանում բազմաթիվ կուլակներ ու կազակներ կային։ Հարավում բոլոր հականեղափոխականները չորս կողմից հավաքվում ելին։ Անգլիական ու ֆրանսիական կապիտալիստների ոգնությամբ Դենիկինը կուբանում լավ բանակ ե հավաքում։ Անգլիական ու ֆրանսական կապիտալիստների ոգնությամբ Դենիկինը ջարդում է

Կարմիր բանակի զորամասերը Հյուսիսային կովկասում ու Դոնի շրջանում: 1919 թվի մայիսից Դենիկինը հարձակումներ ե գործում Խորհրդապետությունը կարմիր բանակի և Դոնի ավագանի վրա: Կարմիր բանակի գլխավոր ռաժերն այդ ժամանակ արեմուտքում ելին, ուստի Դենիկինին հաջողվում ե շարունակ առաջ ու առաջ գնալ: Դենիկինը կազակների ամենալնտիր զորամասեր ու լավ հեծելազոր ուներ: Կարմիր բանակը հեծելազոր համարյա չուներ, իսկ այնտեղ թիկունքում Մախնոն ու ատաման Գրիգորեն են դավաճանում. Մախնոն Խորհրդային իշխանությանն ոգնում եր Ուկրայնան թշնամիներից ազատելու, բայց յերբ Խորհրդային իշխանությունն սկսեց պլանաշափ հեղափոխական շինարարություն ու պարտիզանականությունը լիկվիդացիա անելու գործին ձեռնամուխլինել, Մախնոն սկսեց խորհուրդները ցրիվ տալ:

Այդ պատճառով Կարմիր զորքերն Ուկրայնայում յերկար դիմադրել չկարողացան: Հաղթությունը Դենիկինը տարավ: Սպիտակ գվարդիականները քաղաքներում ու գյուղերում սկսեցին հաշիվ տեսնել բանվորների ու կոմունիստների հետ, կախել ու գնդակահարել առանց վորեեդատի: Հողն սկսեց կալվածատերերի ձեռքն անցնել: Դենիկինը Մոսկվայի վրա արշավելու պատրաստություններ եր տեսնում:

1919 թվի ոգոստոսին Դենիկինը Մամոնտովի հեծելազորը Կարմիր զորքերի թիկունքը շպրտեց: Մեծ տարածություններ կարելով, կազակները քաղաք քաղաքի հետևից ելին վերցնում: Խորհրդապետությունը կարմիր մի ծայրից մլուսն այս կոչը հաջեց «Պրուետարներ, ձիերը պատրաստ»:

Կոմունիստները - բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն ելին, վոր առաջինը հղոր, անպարտելի Կարմիր հեծելազոր ստեղծեցին՝ մի քանի ամսվա ընթացքում Դենիկինի հեծելազորին ստիպեցին հաշվի առնել այս:

Հեկտեմբերին Դենիկինը վերցրեց Որյուլ, նրա հեծելամբերը Տուլայի տակ ելին: Թշնամին հեղափոխության սրտին եր մոտենում:

Մոսկվան վտանգի մեջ եր:

Կոմունիստների և արհմիությունների անդամների նոր զորահաք ե. նրանք շատալ ճակատ են ուղարկվում: Կարմիր զորամասերն սկսում են ամրապնդվել:

Իսկ Դենիկինի բանակն իր հերթին քայլավում ե, ինչպես կոլշակի բանակն եր իր ժամանակին քայլավում: Դենիկինի բանակի թիկունքը կարմիր պարտիզաններն ու կանաչ բանակներն են անցել արդեն: Առանձին զորանամեր կարմիրների կողմն են անցնում: Հոկտեմբերի 19-ին Բուդյոնով հեծելազորը Վորոնեժի

տակ գլխովին ջարդեց Մամոնտովի ու հռչակավոր Շկուբովի ձիավորներին... Սկսվում է Կարմիր զորքերի հարձակումը: Սպիտակ բանակն սկսում է նահանջել ու նահանջում է մինչև 1920 թվի մայիսի 4-ը, յերբ դենիկինշչինան միանգամայն ջարդ ու փշուր ելինում: Վրանգելի հրամանատարությամբ Ղրիմ գնացող միքանի զորամասեր են միայն մնում և կուբանում ու Դոնի շրջանում՝ մանր բանդաներ:

Կովկասում, Ուկրայնայում ու Ռուսաստանի հարավում խորհուրդներ են ստեղծվում: Հագուստ չկար, վոտնամանները վատ ելին, սպառագինութեան այնքան ել լավ չեր, ժողովուրդ չկար և անանցանելի անտառների միջով պետք են ճանապարհ կտրելին:

Անգլիացիներն ու ամերիկացիները լավ ելին զինված ու հազնված ու լավ ել սնունդ ելին ստանում: Բայց և այնպես ամեն մի քայլը համառ կռվով ելին միայն նրանք վերցնում: 1920 թվի սկզբին միայն կարելի յեր ոգնել հյուսիսացին Կարմիր բանակի մի բուռն կտրիճներին և անգլիացիներին սառը ծովը թափել: Սպիտակ զվարդիականները մեծ կարողություն, շատ մթերքներ, հանդերձանք ու զենքեր թողին: Հյուսիսում Խորհրդացին իշխանությունը վերահստատվեց:

Յերկրագնդի մի վեցերորդ մասի մեկ ծայրից մյուսը հեղափոխության կարմիր գրոշն եր ծածանվում: Դրոշը բանվորագյուղացիական կարմիր բանակի վատահելի ու հզոր ձեռքերումն եր: Այդ բանակի շարքերում մոտ յերեք միլիոն մարդիկ կար:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽԱՂԱՂ ՃԱԿԱՏՈՒՄ

Կարմիր բանակը ոռուսական սպիտակ գվարդիականներին ջարդ ու փշուր են անում: Ամբողջ յերկիրը խաղաղ աշխատանքի յե անցնում: Զենքերի վայր չգնելով, Կարմիր բանակն իրեւ Խորհրդացին պետության մի մասը, յերկրորդ ճակատին—տնտեսական ճակատին են անցնում: Այս ճակատում ևս Կարմիր բանակը հաղթություններ եր տանում: Ուկրայնայի աշխատավորական բանակը մոտ 1000 շոգեքարշ ու 3,500 վագոն են նորոգում ու փայտի պաշար պատրաստում: Գլխավոր գործն այն ժամանակ այն եր, վոր տրանսպորտը, յերկաթգիծն ու կամուրջները կարգի բերելին ու ցանքսերի տարածությունն ընդարձակելին: Որինակ, 6-րդ բանակը գլուղացիների համար 14,000 դեսյատին հող են վարում ու ցանում: Կարմիր բանակի ամեն մի զորամասը նակշության ու պետության ալս կամ այն կերպ ոգնություն եր հասցնում:

Սակայն խորհրդավին Ռուսաստանի բանվորնորն ու գյուղացիները չկարողացան խաղաղ աշխատանքով յերկար ապլել: Արևմուտքից պանական Լեհաստանը դարձյալ անզլիական ու, գրլիսավորապես, ֆրանսիական կապիտալիստների ոգնությամբ խորհրդավին Ռուսաստանի վրա հարձակվեց:

### ԼԵՀԱՍՏԱՆ ՈՒ ՎՐԱՆԳԵԼ 1920 ԹԻՎ

Լեհաստանի հարձակումը Վրանգելի հետ համաձայնեցված եր: Կրիտիկական այն բոպելին, յերբ Կարմիր բանակը կարող եր Լեհաստանի Վարշավա քաղաքը վերցնել, Վրանգելի զորքերը Դրիմից դուրս սողոսկեցին ու սկսեցին Ուկրայնայի վրա շարժվել: Նրանք գեպի Դոնի տվաղանի քարայուխն ելին գնում: Լեհաստանին ոգնելու համար Ուկրայնա ելին գնում՝ քարուքանդ անելով Կարմիր բանակի թիկունքը: Սակայն ինչպես քաղաքացիական կոփմերի ժամանակ եր լինում, բայց կեկների կոմունիստական կուսակցության կանչին, Լենինի կանչին բանվորների ու գյուղացիների լայն մասսաներ արձագանքեցին: Միբիրից, Վոլգայի շրջանից, Կովկասից և Ուկրայնայից սկսեցին մարտական դրամասեր շպրտվել:

Մայիսի 14-ին Կարմիր բանակն սպիտակ

լեհերին քշեց: Կարմիր հեծելազորն ու Կարմիր հետևակն ստիպեցին սպիտակ լեհերին մինչև Վարշավա փախչել: Ֆրանսիական ու անգլիական կապիտալիստներն ու բուրժուական մնացած յերկրներն սկսեցին շտապով զենքերի նոր ու նոր պաշար հասցնել: Լեհաստանում՝ զենք կրող բոլոր տղամարդիկ զենքի կանչվեցին: Ազատագրը ված յերկրամասում՝ կարմիրների յերկրում խորհուրդները վերահստատվեցին: Այդ բանը բուրժուազիային ել ավելի յեր վախեցնում: Ուստի, գնալով, սպիտակ լեհերի դիմադրությունն ավելի համառ եր դառնում: Կարմիր զորքերը մի շատ վտանգավոր վիճակում ելին: Նրանց կապը թիկունքի հետ շատ թուլ եր: Իսկ լեհերը միշտ նոր ու նոր ուժեր ելին ստանում: Կարմիրների շարժումը սաստիկ դժվարանում եր նաև Վրանգելի հարձակումով: Ուստի Կարմիր բանակն սկսում ե նահանջել: Մինսկի մոտ միան Կարմիր զորքերի դիմադրությունն սկսեց ուժեղանալ: Այնուհետև միառժամանակ հանգստություն տիրեց: Կարմիր ջոկատներն արագ ջարդ ու փշուր արին Բուլակ-Բալախովիչի բանդաները Պոլեսիայում ու Պետլուրայինը՝ Ուկրայնայում: 1920 թվի կիսին պատերազմը Լեհաստանի հետ վերջացավ: Հենց վոր հնարավոր յեղավդորքի մի վոլոշ մասը հետ բաշել և Վրանգելի

Դեմուղարկել, գործերն ավելի հաջող գնացին։  
Ճիշտ ե, Վրանգելը տանկներ ուներ՝ Ան-  
գլայից ստացած, սակայն Կարմիր մարտիկնե-  
րը ձեռքի ոռոմբերով, մանավանդ գիշերները,  
մենակ գնում վերցնում ելին այդ տանկերը։  
Կարմիր բանակալիները նրանց հետ կռվելուց ել  
չելին վախենում ու կարողանում ելին նրանց  
ջարդել։ Ուստի Պերեկոպի վրա մղվող վճռական  
կռվից առաջ տանկերի մեծ մասը Կարմիր բա-  
նակի ձեռքում եր արդեն։

Բայց Պերեկոպն ըստ ինքյան մի անմատչե-  
լի բերդ եր, տեխնիկալի վերջին խոռոշով պաշտ-  
պանված։ Մի նեղ պարանոց՝ հողի մի կտոր եր  
այդ, իերկու կողմից ծովով սեղմված։ Ամբողջո-  
վին պատած եր յերկաթալարերով ու լցրած եր  
ահագին քանակությամբ գնդացիքներով ու թըն-  
դանոթներով։

Մի ամբողջ շաբաթ Կարմիր դորբերը վըն-  
ռական հարձակման պատրաստություններ ելին  
տեսնում ու 1920 թվի նոյեմբերի 7-ին հարվա-  
ծեցին թշնամուն։ Առանց մի ըովե կանդ առ-  
նելու, հաճախ մինչև կոկորդները ջրի մեջ խըր-  
ված, ծակող յերկաթալարերը կրծքով կտրատե-  
լով՝ Կարմիր բանակը Պերեկոպի վրայով Նրիմ  
թերակղղին մտավ, իսկ Վրանգելն իր առանձ-

նապես հավատարիմ զորամասերի հետ նավեց  
գեպի Ֆրանսիա։

Ահա այսպես չքացավ Վրանգելը։

#### ՎԵՐՁԻՆ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամենադժվար բանը դեռ մնում եր։ Բայց  
մյթե թշնամին յերբեք բոլորովին կհանգստանա։  
«Զոռով չընի՛ Փանդով ըլնի»։ Խորհրդային Ռու-  
սաստանը դրսից վերցնելու ճար ու հնար չկա,  
նրա Կարմիր բանակն ուժեղ ե, ուրեմն պետք ե  
ներսից պայթեցնել, — մտածում են բուրժու-  
ները։ Բանն ուրիշ գուըս յեկավ։

Կրոնշտատում ու Տամբովի նահանգում ա-  
նարխիստներն ու ես-երները, Անտոնովի առաջ-  
նորդությամբ, մտածում ելին Խորհրդային իշ-  
խանությունը վոչնչացնել։ Մի բան միայն աշ-  
քաթող արին, այդ այն ե, վոր բանվորական հե-  
ղափոխությունը Կարմիր բանակ ուներ, վոր գրա-  
վեց ապստամբ Կրոնշտատը, չնայած վերջինս  
անմտչելի յեր, Ճիշտ ե, այստեղ պակաս գեր  
չելին խաղում նավաստիների և ապստամբների  
հրամանատարական կազմի միջև յեղած յերկպա-  
ռակությունները։ Յերբ արտասահմանից Կրոնշ-  
տատում վողջուններ ստացվեցին, շարքալին  
նավաստիներն զգացին, թե իրենց ապստամբու-  
թյունից ինչ հոտ ե գալիս։

Այս թշնամունետ կարմիր բանակը շուտ հաշիվ տեսավ: Սպիտակ բանդաներին արևելքում ել ջարդեց: Յերկրի տնտեսությունն ու հզորությունն ամրապնդելու մեծ աշխատանքն եր հերթի դըրված: Սպիտակ բանդաների մնացորդներին ջարդ տալու և խորհրդային սահմանները պաշտպանելու համար մեծ բանակ պահելու կարիք չկար: Ուստի 1921 թվին արդեն բանակը 3 անգամ կրճատված եր: Իսկ հետո բանակը բոլորովին փոքրացավ, բայց ֆացին նրանք, ովքեր պատրաստ ելին հին մարտիկների ռազմական կտակները կատարելու ու միշտ, յերբ հարկ լինի, հին մարտիկներին հավաքելու և թշնամուն հետ մղելու:

Ինչու կարմիր բանակը հաղթանակող դուրս յեկավ:

Վորովինետն ամբողջ յերկրը, բոլոր բանվորներն ու աշխատավոր գյուղացիները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, լարեցին իրենց ուժերն ու հաղթություն տանելու համար ոգտագործեցին այն ամենն, ինչ վոր հնարավոր եր ոգտագործել: Կարմիր բանակը հաղթանակող դուրս յեկավ, վորովինետն սպիտակ բանակների շարքերում բանվորներ ու գյուղացիներ կային, վորոնք չեին ուզում, վոր Ռուսաստանում Խորհրդային իշխանությունը տապալ-

վի: Վորովինետն մեզ ոգնում ելին անգլիական, ֆրանսիական և այլ յերկրների բանվորները, սպիտակ գվարդիայի համար զենքեր փոխադրելը խանգարելով: Վորովինետն մենք այժմ և այն ժամանակ ել կոմունիստական ուժեղ կուսակցությունն ունելինք և վերջինիս ղեկավարը վ, ի, լենինն եր:

Այժմ մենք խաղաղ վիճակում ենք: Բայց թշնամին ընած չի: Նա կովի պատրաստություններ ե տեսնում: Խաղաղ ժամանակը մենք պիտի հիշենք ու ճանաչենք կարմիր բանակը: Քաղաքացիական կովի ժամանակ կարմիր բանակը կովել սովորեց: Վոչ նրա տեխնիկան եր միշտ բավարար, և վոչ ել միշտ «բոլոր կանոնների համաձայն» եր նա պատերազմում: Ուստի կարմիր բանակը շատ բան պիտի սովորի և, վոր ամենագիսավորն ե, ուզմական տեխնիկան պիտի ամրապնդի:

## ԿԱՐՄԻՐ ԶՈՐԱԿՈՑՆ ՈՒ ԿԱՐՄԻՐ ՃԱՄԲԱՐԸ

Պիոները պիտի իմանա, թե կարմիր բանակն ինչպես ե ապրում ու ինչպես սովորում:

Կարմիր բանակը տոկուն, դիմացկուն պիտի լինի ու լավ վարժեցրած: Ուստի զորանոցում ու ճամբարներում թե ամառը և թե ձմեռը գլխավորապես ուզմական ուսուցմանն են ու-

շաղըություն դարձնում, այսինքն՝ այն բանին,  
վոր կարմիր բանակալինը զենք բանեցնել սովորի:  
Կարմիր բանակի զենքերը շատ բազմազան  
են:

Հրաձգալիներն - առաջ հետեակ (վոտավոր)  
ելին կոչվում - զինված են թեթև հրացաններով, (կարելի է ձեռքով տանել) ու ծանր տեսակով - զնդացիրներով (անիվերի վրա յին տանում): Առանձին հրաձգալին գնդերի յերբեմն թնդանոթներ են տրվում: Մեր ամեն մի հրաձգալին գունդ ուսարերկրա ամենալավ զորքերից ել կարող ե պաշտպանվել և կովել այնպես, ինչպես ֆրանսիական և այլ զորքերն են կովում:

Հեծելագորը - ձիավորը հրացաններով, զընդացիրներով. թնդանոթներով ե զինված, յուրաքանչյուր հեծյալ սուր ու նիզակ ունի: Գնդացիրները յերկաթե սալլակներով - Տաշանկաներով են տանում: Թնդանոթածիզները - թնդանոթներ, հրարձակներ, ականաձիզներ, ոմբաձիզներ ունեն: Այս բոլորը պատերազմի սարսափելի զենքեր են: Այժմ, գալիք կովում այն բանակն ե հաղթելու, վոր շատ թնդանոթներ ու ուղղմամթերքի մեծ պաշար ունի:

Մեր կարմիր բանակը թնդանոթներով ու զնդացիրներով տանկեր, զբանապատ գնացքներ ունի:

Ողալին ու ծովալին տորմիդ ունենք մենք:  
Զորքերին սպասարկելու համար սակրավորներ (սապեր) են պետք (խրամատներ են փորում, ճանապարհներ շինում, կամուրջներ նորոգում կամ քանդում), նաև կապ, այսինքն՝ հեռախոսողներ ու հեռագրողներ են պետք:

Այսպիս ե զինված մեր կարմիր բանակը: Կամիր բանակալինները զենք բանեցնելը սովորելու համար  $1\frac{1}{2}$  2 ատրի իսկական զինվորական ծառայության մեջ են մնում: Բայց մեզ համար ձեռնտու չե զորանոցներում մեծ բանակ պահել: Ուստի մեր բանակի մի մասը յերկրային ե, այսինքն իր յերկրամասում, իր տան մոտ ե զորակոչվում ու վարժվում: Այդ մասին կխոսենք շարունակության մեջ:

Բացի ուղմական գործից, մի քիչ ել ուրիշ բան պետք ե սովորել:

Մեր կարմիր բանակը բանվորներից ու գլուղացիներից ե բաղկացած: Նրանք պետք ե իմանան, թե իրենք ինչու համար են կովում, ովքեր են իրենց բարեկամներն ու թշնամիները: Կարմիր բանակն այս բանի համար մի զենք ել ունի, վոր ոտարերկրա վոչ մի բանակ չունի, այն ե՝ քաղաքական գրագիտություն, կենինի ուսմունքը: Կարմիր բանակի յուրաքանչյուր մարտիկ բաղաբական զիտություններ ե ուսում-

նասիրում, խորհրդային աշխատանքին ե մասնակցում։ Նա զինվոր ե ու բաղաբացի։

Տեսնենք, թե կարմիր բանակայինն աշխատանքի ինչպիսի որ ունի։

Վաղ առավոտյան զորանոցում (ձմեռը)ու ճամբարում (ամառը) «վեր կենալու» ազգանշանն են փչում։ Բոլորը վեր են կենում, լվացվում և թել սկսում։ Այնուհետև մարզանքի յեն գնում։ Թե ինչ բան ե մարզանքը—ամեն մի պիոներ գիտե, ճամբարներից մի քանիսում ամառը կարմիր բանակայինները տրուսիկներով մարզանքի յեն գնում— «պիոներ» դառնում,

Մարզանքից հետո քաղաքական պարապմունքներ են տեղի ունենում։ Քաղղեկը կոմունիստներից ե, ուզմա-քաղաքական դպրոցն ավարտած, ինքը պատմում ե ու կարմիր բանակայիններին պատմել ե տալիս, թե ինչպես ե կառուցված բանակը, ինչպիսի իշխանություն ունենք մենք, կարմիր բանակն ինչպես եր կովում, ով եր լենինը, և ուրիշ շատ այնպիսի բաներ, վոր կարմիր բանակայինը պետք ե իմանա։

Մարզանքից հետո, թարմացած ուղեղով քաղաքականությամբ պարապել կարելի յէ։ Այդ պատճառով մեր կարմիր բանակը գրագետ ե, զրել գիտե—այս ել քաղաքարապմունքների ժա-

մանակ են սովորեցնում,—այս գիտե, թե ինքնինչն համար ե կովում։

Քաղպարապմունքից հետո մինչև ժամի 13-ը ուղմական գործով են պարապում։ Ճմեռն ու ամառը սովորաբար այդ նպատակով դաշտ են կուրս գալիս։ Զե՞ վոր կոփվը դաշտում կլինի, ուստի կովելն ել այդտեղ պետք ե սովորել։ Դաշտում սովորում են կրակել, թշնամուց թագնվել (քողարկվել) հակագազ կը ել (դիմակներ գագերի դեմ), ման գալ, թշնամու վրա հարձակվել, հետախուզություն կատարել և այլն։

Ուսումնասիրում են ուղմական որենքները, թե ինչպես անեն, վոր առանց մեծ կորուստների թշնամուն հաղթեն։

Այս նպատակով յերբեմն զորաշարժեր են կազմակերպում, յերբ մի զորամաս միուսի վրա յե հարձակվում։

Յերեկվա ժամի 13-ից հետո ճաշի յեն գնում։ Բոլորը շարժական խոհանոցի մոտ են վագում։ Մինչև ժամի 16-ը հանգստանում են։ Այնուհետև նորից դաշտ են գնում ու մինչև ժամի 19—20-ը մնում։ Նորից ուզմական գործ։

Ժամի 19-ից հետո ընթրում են, ապա լենինյան անկյուն կամ ակումբ հանգստանալու գնում։ Կարմիր բանակի ամեն մի վաշտում, եւ կադրունում, մարտկոցում լենինյան անկյուն կա-

Հենանկլան պատերին առաջնորդների պատկեր-ներ, քարտեզներ ու կարմիր բանակալինների համար անհրաժեշտ տեղեկություններ կան: Գիրք, լրագիր ու հանդեսներ կան: Թերթերի ընթերցանություն ու զրուցյներ են տեղի ունենում: Յերբեմն յերգ ու պարով, խաղերով փոքրիկ յերեկույթներ են կազմակերպվում: Լենինյան անկունում խաղեր շատ կան: Այնտեղ թե քաղվիճակախաղ, թե քաղֆանթ, թե քաղլոտո, թե քաղտիր ու շատ ուրիշ բաներ կան: Քաղղեկավարն ու կոմունիստների բջիջն աշխատում են կարմիր բանակալինների մեջ: Ներթապահ կուսակցական անդամը կարմիր բանակալիններին հուզող հարցերի վերաբերյալ պատասխաններ ետալիս նըանց: Լենինյան անկունում կարմիր բանակալինները նամակ են գրում առևն: Լենինյան անկունի բոլոր զարդարանքները կարմիր բանակալինների իրենց պատրաստածն ե: Զորանոցի լենինյան ամեն մի անկունում, ճամբարների լենինյան ամեն մի վրանում պիոնների անկուն կա: Այնտեղ պիոններական անկունում նկարներ, լուսանկարներ կան, պիոնների շարժման պատմությունն ե գրված: Կարմիր բանակալինները պիոններների մասին գիտեն: Պիոններներն ել կարմիր բանակը պիտի ճանաչեն:

**Ժամը 10-ին «քնելու» փողն եւ փչում։ Զբ-**

մեռը զորանոցում տախտերի վրա, իսկ ամառը  
վրաններում՝ գետնին են քնում:

ԹԵ զորանոցում ե թե ճամբարներում ընթ-  
րիքից առաջ ստուգում ե կատարվում: Կարծիր  
բանակալինները դուրս են գալիս ու շարվում են  
վրանների առջև: Նրանմանատարները մարտիկնե-  
րին ցուցակով ստուգում, անունները մեկ մեկ  
կարդում են: Հետո ցայտերդ են նվազում ու  
յերբեմն ել «Ինտերնացիոնալ» յերգում: Ու այն  
ժամանակ հեռովից հեռու լսվող՝ վողջ աշխարհի  
բանվորների յերգը թռչում է վրանների վրացով:  
Գուցե արտասահմանումն ել՝ Գերմանիայում՝ կամ  
Ֆրանսիայում՝ մեկն ու մեկի, ֆրանսիական բա-  
նակի բանվոր ու գյուղացի կարմիր բանակալին-  
ները ճամբարներում շուտով «Ինտերնացիո-  
նալ» յերգեն:

ՄԻԼԵԳԻԱՆ ՀԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բացի մշտական զորամասերից, Կարմիր բանակը յերկրացին զորամասեր — միլիցիական մասեր ել ունի։ Այդ այն միլիցիան չե, վոր կարգ ե պահում ու Խորհրդակին իշխանության մարմիններին ողբում՝ բանդիտիզմի դեմ կռիվ մղելու։ Դրանք նույնպիս հրացանաձիգ դիվիզիաներ ու հեծելազոր են, ինչպես և մշտական բանակը։ Տարբերությունը միայն այն է, վոր այս կարմիր

բանակալինները 2 տարի շարունակ զորանոցներում չեն ապրում, այլ կարճ՝ 1-2 ամիս ժամանակով են գալիս։ Այդ հավաքներում սովորելուց հետո՝ ցրվում են աները։ Ու այդպես 4 տարի շարունակ։ Խորհրդավին իշխանությունը ցանկացած ըռպելին կարող է նրանց կանչել, ու բանակը միանգամից կմեծանա։

Այսպես անելու պատճառն այն է, վորուազմական ծախսերը քիչ լինեն և վորուազի, այնուամենայնիվ, լավ, ամեն տեսակի զորքեր հետ մղելու համար բավարար չափով կարմիր բանակ ունենանք։

21 տարեկանի հասած բոլոր քաղաքացիներին, ըստ իրենց բնակավայրի, մշտական կամ յերկրային գորամասեր են նշանակում։ Այս բանից մեկ-յերկու տարի առաջ նրանք դեռ, այսպես ասած, նախազինակոչյան պատրաստություն ել են անցնում, սովորում են գորամասերից դուրս՝ տան մոտ, վարժական կայաններում, ֆարբիկաների մոտ կամ գավառակային զյուղերում։

Յերկրային գորամասերում 4 տարի ծառայելուց հետո կարմիր բանակալինները տուն են արձակվում պահեստի համար։ Նրանք արդեն ուղերվում են հաշվում ու միմիայն առանձնապես ծանր ըռպելներում կամ զորահավաքի դեպքում պատերազմի կլանչվեն։

## ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

Պիոներն իր կանոններն ե պահում։ Պիոներական որենքները պիոները զիտե, այդ որենքներին յենթարկվում ու կատարում ե։ Կոմիերիտականներն իրենց միութենական, իսկ կոմունիստները կուսակցական կարգապահությանը հագատարիմ են։ Կարմիր բանակալինները յենթարկվում են հրամանատար ու կոմիսար պետերի հրամաններին։

Հրամանատարները հրաման են տալիս, թե ինչպես անեն, վոր մարտական հանձնարարությունը լավ կատարվի։ Հրամանատարը բանվորների ու գյուղացիների իշխանության կարգածն է, նա ինքն աշխատավոր ե։

Առանց կարգապահության, առանց հրամանները խիստ կատարելու, բանակը կքայլալի ու կհաղթվի։ Ուստի բոլոր տեսակի հրամանների ամենախիստ կատարումը գալիք պատերազմերում կարմիր բանակի հաղթության ու հաջողության գրավականն է։

Վողջ կարմիր բանակը սահմանված տարագե հագնում։ Թեզանիքից (հաշիւք) կարելի յեիմանալ, թե կարմիր բանակալինը վոր զորամասում ե ծառայում։ Սև յեղբավոր՝ մոռ գուշի կոճկառով (պետլից) հրածիգ ե, ու յեղբավոր

մուզ-կապույտ կոճկառովը ձիավոր ե, կարմիր յեղբավոր սև կոճկառովը թնդանոթածիգ ե: Մնացյալները բանակում ու բարձրագույն կը թական հիմնարկներում (Վզչ-Նրամանատարական դպրոցներ) սպասարկողներ են (ծառայություն մատուցողներ):

Նրամանատարներն առանձին նշաններ են կում, փորպեսզի կարելի լինի նրանց կարմիր բանակալիններից զանազաներ, վոր կարմիր բանակալինը միանգամից կարողանա իր պետին տեսնել: Նրանց կոճկառները յեռանկյուններով, քառակուսիներով, ուղղանկյուններով ու շեղանկյուններով են:

Կարմիր բանակի բարձրագույն իշխանությունը Խորհրդավին՝ Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ռազմահեղափոխական Խորհուրդն ե: Խորհրդի նախագահն ընկ. Վորոշիլովն ե, իսկ տեկակալը՝ ընկ. Ունիլիսը\*)

Կարմիր բանակի բարձրագույն քաղաքական մարմինը ՊՈՒԲ-ն ե, ՊՈՒԲ-ի պետն ընկ. Բուրնինո ե: ՊՈՒԲ — բանվորա-գյուղացիական կար-

\*) 1925 թ. հոկտեմբերի 31-ին ընկեր Ֆրունզեն մեռակ: Ռազմահեղափոխական Խորհրդի նախագահ նշանակվեց ընկ. Վորոշիլովը. իսկ տեղակալներ ընկ. Լաշեվիչը և Աւալիսը:

միր բանակի քաղաքական վարչությունն ե: ՊՈՒԲ-ը կոմունիստական կուսակցության կենտրոնական բաժինն ե: Ամեն մի դիվիզիայում քաղաքական բաժիններ, կարմիր բանակի ամեն մի զորամասում կոմիսար քաղղեկավարներ ու կ. կ. (բ.) բջիջներ կան:

### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԸ

Կարմիր բանակի ապրած ծանր տարիներում ամեն անգամ չեր հաջողվում կարմիր հրամանատարներին մինչև վերջ սովորեցնել: Նրամանատարներ հարկավոր ելին, բայց նրանք քիչ ելին: Դեռ դասընթացներ կամ դպրոցներ չընդունված հարավում, չուսիսում, Լենինգրադի տակ թշնամի յեր բուժնում: Ու կուրսանաների (դասընթացների ուսուանողների) գնդերը լենինգրադի տակ են գնում: Կուրսանաներն սպիտակ գվարդիական զորքերի համար ամենամեծ սպառնակին ելին:

Պատերազմի ժամանակ բանվորներ ից ու զուղացիներից՝ իրենց հրամանատարները դուրս ենկան: Դուրս յեկան Բուգունին, Վոստրեցովը, Ֆաբրիցիուսը, Կոտովսկին և շատ ու շատ ուրիշ հրամանատարներ:

Դպրոցներում ներկայումս բանվորներ և զուղացիներ շատ կան:

1918 թվին ամեն մի 100 սովորողից 37-ը բանվոր եր ու 25 ը գյուղացի, մնացած մասն աշխատավոր ինտելիգենտներ եղին:

1922 թվին՝ ամեն մի 100 սովորողից 28-ը բանվոր եր, 58-ը գյուղացի և 14-ը ուրիշ խավերից։ Հիմա՝ 1925 թվին ամեն մի դպրոցում յուրաքանչյուր 100 հոգուց 15-ը կոմունիստ եւ մոտ 60-70-ը կոմիերիտական։ Կարմիր բանակի հրամանատարները յերեք տարինորմալ դպրոցում են սովորում, այսուհետեւ ուազմական բարձրագույն դպրոցներում ու կարող են սովորել նաև ուազմական ճեմարաններում։ Մենք բարձրագույն հրամանատարներ ու խորհրդային ֆելդմարշալներ ունենք։

### ՔԱՂՂԵԿՆ ՈՒ ԶԻՆԿՈՄԸ

Կարմիր բանակի ամեն մի վաշտում, ես-կադրոնում, մարտիկոցում քաղցեկ—քաղաքական դեկավար, իսկ գնդում՝ զինվորական կոմիսար կա։

Զինկոմը հետևում ե զորամասի կարգապահության, և մարտիկներին սովորեցնելու գործում հրամանատարներին ու քաղցեկավարներին ողնում ե։ Զինկոմը կուսակցության բջիջի ավագը ընկերն ե։

Այժմ Խորհրդային իշխանությունը հրամա-

նատարաներին շվատահելու հիմք չունի։ Զինկոմ առաջ մասնագետ հրամանատարի մոտ վերահեռակիչ եր ու հետևում եր, վոր նա կարմիր բանակը չմատնի ու չդավաճանի այն։ Այժմ մենք բազմաթիվ ազնիվ բանվոր ու գյուղացի հրամանատարներ ունենք, իսկ մնացած հին սպաները Խորհրդային իշխանությանը մաքուր են ծառայում։ Նրանցից վոմանք կոմունիստներ են դարձել, Ռւստի այժմ կարմիր բանակում միահրամանատարություն ե մտցվում, այսինքն՝ զորամասի ամբողջ վիճակի համար հրամանատարն ե պատասխանատու։ Քաղղեկները վաշտերում քաղաքական պարապմունքներ, ու զըռէցներ են անցկացնում, կարմիր բանակայիններին դաստիարակելու գործում ոգնում են հրամանատարներին, կուսակցության ու կոմիերիտական խմբակների աշխատանքների ասպարիզում թիջսերին ոգնական են հանդիսանում։

Քաղղեկավարն ու զինկոմը կովի մեջ միշտ առաջինն են յեղել, մարտիկների առաջից են առաջնացել ու կարմիր բանակայիններին իրենց հետեւից են տարել։

1921 թվին բոլոր կուսակցական անդամների կեսը կարմիր բանակում եր, Այժմ նրանք

բավականին քիչ են, ինչպես առհասարակ քչացել ենակ բանակը:

ԲԺԻՇՆԵՐԸ, ԿՈՄՈՒՆԻՏՈՍՆԵՐՆ ՈՒ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ-  
ՆԵՐԸ

Կարմիր բանակը նաև շնորհիվ այն բանի  
յեր կարողանում հաղթել, վոր պատերազմական  
գործողությունների ծանր բողեներում նրա շար-  
քերը կոմունիստական ու կոմյերիտական լրա-  
ցուցիչ նորանոր ուժեր ելին լցվում։ Նրանք  
հոգնուծ մարտիկներին կազմակերպում, միաձու-  
լում ու դեպի հաղթանակ ելին տանում։ Կոմու-  
նիստներն ու կոմյերիտականներն որինակելի  
մարտիկներ ելին։ Հաճախ կոմունիստներից  
մարտական առանձին ջոկատներ ելին սաեղծ-  
վում, վորպեսզի ինչ գնով ել լինի, կարողանան  
վորեւ առանձին կարևոր կետ պաշտպանած լի-  
նել։ Յեվ կոմունիստները մեռնում, բայց անձ-  
նատուր չելին լինում, իրենց տեղը թշնամուն  
չելին տալիս։ Սպիտակների կոմմից կոմունիստ-  
ների վրա կտարած բարբարոսություններն ել  
անխիղճ ելին։ Նրանք գիտելին, վոր կոմունիստ-  
ները Կարմիր բանակը կապում, միաձուլում,  
այնտեղ հեղափոխական վողի յեն մացնում...  
Ուստի ամբողջ թույնը գլխավորապես նրանց  
վրա յեր թափվում, Պատահմամբ գերի ընկած

կոմունիստաների ու կոմիտերիալակաների վրա՝ սպիտակներն անլուր բարբարություններ ենին գործ դնում, որինակը լեզուն, ականջներն ու քիթը կտրում ելին, մատները կոտրատում, կախաղան ելին հանում, գնդակահարում ելին։ Գերության մեջ կոմունիստը շատ ու շատ բիչ եր պատահում, վոր կենդանի մնա, իսկ յեթե հաջողվում եր փախչեր, ապա նա հաշմանդամ եր դարձած։

Այժմ կարմիր բանակի ամեն մի զորամասում կոմունիստական կուսակցության բջիջ գոյությունն ունի, ուր ամեն մի կարմիր բանակայինն ու հրամանատար կարող է մտնել իրքև անդամ։ Բջիջն անկուսակցակաների մեջ աշխատանքներ ե տանում։ Կարմիր բանակի ռազմունակությունն ամրապնդելու գործում բջիջն ոգնում և հրամանատարին ու քաղաշխատակիցներին։ Բջիջն ոգնում և կարգապահությունն ամրապնդելու և մարտիկներին սովորեցնելու գործում։ Ռազմական ու կարգապահության գործը սովորելու ասպարիգում, ամեն մի կոմունիստ կարմիր բանակայինին որինակ է ծառայում։ Կոմունիստաները բանակում Ավիոքիմի բջիջներ, «Յերեխաների բարեկամների» ու «Կորչի անզրագիտությունը» ընկերություններ են կազմակերպում։ Կոմունիստաները բոլոր կարմիր բանակա-

յիններին այդ ընկերությունների աշխատանքներին մասնակից են գարձնում։ Կոմունիստներն աշխատում են Լենինյան անկյուններում ու Լենինյան վրաններում և այնտեղ հերթապահություններ են անում։

Ոտարերկրյա բուրժուական վոչ մի բանակում այնպիսի ներքին կուռ կապ չկա, ինչպես մեր կարմիր բանակումն եւ։

Կոմունիստական կուսակցությունն աշխատավորների ու հեղափոխության առաջնորդն եւ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բանվորները ու գլուղացիները կառուցում են իրենց պետությունը։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բանվորներն ու գլուղացիները կառուցում են իրենց կարմիր բանակը։

Կարմիր բանակում կոմունիստական կուսակցության բջիջներին կից՝ կուսակցությանն աջակցելու կոմիերիտական խմբակներ են կազմակերպվում։ Կարմիր բանակալիններին դաստիարակելու աշխատանքների գործում նրանք ոգուում են բջիջներին։ Մինչդեռ հրաձիգների ամեն մի վաշտում մոտ 5 կոմունիստ կա, կոմիերիտականները յերբեմ 20-25 մարդ են լինում։ Կարմիր բանակի կոմիերիտականները մեծ մասամբ շարքային կարմիր բանակալիններ են։

Նրանք մարտիկների հետ միասին են ապրում, միևնույն մահճականների կամ թախտերի վրա յեն ընում։ Կոմիերիտականները գիտեն, թե ինչով եւ ապրում և ինչի մասին եւ խոսում կարմիր բանակալինը։ Նրան ոգնում են անհասկանալի հարցերը լուծելու։

Թե կոմունիստները և թե կոմիերիտականները կարմիր բանակը միասին կառուցում ու նրա շարքերն ամրապնդում են։

### ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՆ ՈՒ ՊԻՌՆԵՐՆԵՐԸ

Պիոները բոլոր յերեխաններին որինակ եծառալում։ Կարմիր բանակը մյուս յերկրների գալիք բոլոր կարմիր բանակներին նույնպես որինակ եծ ծառայելու։

Կարմիր բանակը կապ ունի Խ. Ս. Հ.Մ.-ի բոլոր աշխատավորների ու պիոներների հետ։

Քաղաքացիական կոիվների ծանր տարիներում ճակատում՝ դաժան թշնամու քթի տակ կարմիր բանակը մանկական տոներ եր կազմակերպում։ Այդ տոնակատարությունների ժամանակ կարմիր բանակալինները յերեխանների հետ «յեղալըանում ելին», մանկական խաղեր, պարեր ու յերգեցողություններ ելին կազմակերպում։ Սպիտակ գվարդիայի հետ ունեցած կոիվների մասին յերեխաններին պատմություններ

ելին անուռմ: Պատմում ելին բանվորների ու  
գյուղացիների իշխանության մասին: Այդ յերե-  
խաներից շատերն այժմ կոմյերիտականներ են  
ու հիշում են կոմիսերից տանջված ու պատա-  
ռուաված կարմիր բանակացիններին:

Հենց հիմա յել բոլոր պիոներները ճա-  
նաչում են կարմիր բանակացիններին, Բայց այս  
կարմիր բանակացինները 1925 թվին իրենց ար-  
տաքինով հին կարմիր բանակացիններին նման  
չեն: Նրանք ավելի լավ են հագած-կապած, քան  
1918 - 1920 տարիներում եր:

Զորատեսերի ժամանակ կարմիր զորանո-  
ցում ու ճանբարներում պիոներները կարմիր  
բանակի սիրելի հյուրերն են:

Յեվ բանվորա-գյուղացիական իշխանության  
կոչին, հիշելով իյէիչի պատգամները, վողջ կար-  
միր բանակը, իբրև մի մարդ, պիոներների պես  
ամպրոպալին գոռոցով կպատասխանի՝ մի՛շ  
պատրաս:





ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

